



ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Իսկական Մեղաւորները

Հայաստանի Ազգային Անվտանգութեան Ծառայութեան հրապարակած տեսագրութիւնները՝ խորհրդարանի պատգամաւոր եւ երկրապահ Կամաւորականներու Միութեան նախագահ՝ զօրավար Մանուէլ Գրիգորեանի տան եւ յարակից կալուածներուն մէջ յայտնաբերուածներու մասին, ցնցեց ամբողջ հասարակութիւնը:

Ժողովուրդի համար անակնկալ չէր օլիգարխներու ընդհանուր պահուածքը եւ երկրի թաւանումին անոնց մասնակցութիւնը: Սակայն, տարողութիւնը որուն ականատես եղանք բոլորս, սահմրկեցուցիչ էր եւ յուզիչ: Գրիգորեանի մօտ յայտնաբերուած զինանոցը չէր պատճառը, ոչ ալ հնաոճ արժեքաւոր մեքենաներու մեծ թիւը, եւ ոչ ալ կենդանաբանական այգին, ուր կը պահուէին վագր, արջեր եւ քայլամներ: Այդ բոլորը կարելի էր ընդունիլ եւ բացատրութիւն գտնել: Սակայն, այն ինչ որ զայրոյթ յառաջացուց բոլորին, ապրիլեան պատերազմի ընթացքին հայաստանէն ու տարբեր երկիրներէն ուղարկուած սնունդի պաշարները, շտապ օգնութեան մեքենան ու այլ կենսական իրերու յայտնութիւնը էր: Իսկ ամենէն յուզիչը՝ դպրոցական երեխաներու գրած նամակներն էին՝ սահմանը պաշտպանող քաջարի զինուորներուն: Այդ նոյն պատանիները, որոնք կարճ տարիներ ետք, իրենք է որ պիտի երթան պաշտպանելու հայրենիքի սահմանները ու սպասեն յաջորդ սերունդին եկող նամակներուն ու ոգեւորուին անոնցմով:

«Արցախի Հերոս» կոչումին արժանացած զօրավարը միակ չէ դժբախտաբար: Իր նմանները շատ են Հայաստանի տարածքին: Քսան տարի երկիրը կողոպտած ու զայն անձնական ազարակի վերածած համակարգը պատրաստած է ու սնանած նման բազմաթիւ ու բազմաթիւ տիպաւորներ, որոնք բոլորն ալ ի յայտ պէտք է քան:

Այն ինչ որ ժողովուրդը Ապրիլ-Մայիս ամիսներուն իր պայքարով իրագործեց, իսկապէս հրաշք մըն էր, որ եկաւ փրկելու երկիրը վերջնական կործանումէ:

Հայաստանի նոր իշխանութիւնները ունին դժուարին առաքելութիւն: Լուծելի հարցերը բազմաթիւ են ու բազմաշերտ, սկսեալ սահմաններու պաշտպանութեան հարցերէն, ժողովուրդի առօրեայ կարիքներէն, հասնելու համար տնտեսութեան զարգացման:

Հակառակ այդ բոլորին, պէտք է ըլլալ հետեւողական, չխնայելով ոչ մէկուն: Պէտք է շարունակել պայքարը ու պատասխանատուութեան կանչել բոլորին, սկսեալ առաջին դէմքերէն: Արդարեւ, անոնք են գլխաւոր մեղաւորները:

«ՄԱՍԻՍ»

Զօրավար Մանուէլ Գրիգորեանի Մասին Բացայայտումները Ցնցեց Հայաստանը

Յունիս 17-ին Հայաստանի Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը (ԱԱԾ) հրապարակեց Ազգային Ժողովի պատգամաւոր եւ երկրապահ Կամաւորականներու Միութեան նախագահ՝ զօրավար Մանուէլ Գրիգորեանի էջմիածինի տան եւ պահեստարաններու խուզարկութեան տեսագրութիւնները, որոնք եկան ցնցելու Հայաստանը:

Գրիգորեանի պատկանող կալուածներէն յայտնաբերուեցան մեծ քանակութեամբ զէնք ու զինամթերք, ինչպէս նաեւ բանակի զինուորներուն համար նախատեսուած ալլեւալլ ապրանքներ, որոնք որպէս օժանդակութիւն ուղարկուած էին 2016-ի ապրիլեան քառօրեայ պատերազմի օրերուն:

Յունիս 19-ին, Հայաստանի Ազգային Ժողովը փակ քուէարկութեամբ համաձայնութիւն տուաւ Մանուէլ Գրիգորեանի ձերբակալութեան վերաբերեալ գլխաւոր դատախազ Արթուր Դաւթեանի միջնորդութեան:

Քուէարկութեան մասնակցած են 82 պատգամաւորներ, որոնցմէ կողմ քուէարկած է 77-ը, դէմ՝ 3 պատգամաւորներ, իսկ 2 քուէ նկատուած է անվաւեր:

Պատգամաւորի նկատմամբ կալանքը որպէս խափանման միջոց ընտրելու համար անհրաժեշտ էր խորհրդարանի համաձայնութիւնը: ԱԱԾ-ի տուեալներով Մանուէլ Գրիգորեանին պատկանող հանգստեան Գօտին վերածուած էր զինապահեստի: Գտնուած են 30-է աւելի հնաոճ արժեքաւոր մեքենաներ, «զինուորի բաժին» պիտակով սնունդի, դեղորայքի, զինուորական հանդերձանքի ապրանքներ:



Մանուէլ Գրիգորեան եւ իր մօտ գտնուածներէն օրինակներ

Էր զինապահեստի: Գտնուած են 30-է աւելի հնաոճ արժեքաւոր մեքենաներ, «զինուորի բաժին» պիտակով սնունդի, դեղորայքի, զինուորական հանդերձանքի ապրանքներ:

Ըստ ԱԱԾ-ի տարածած հաղորդագրութեան, Ձինուորներուն հասցեագրուած արկղերուն կից նամակներէն ակնյայտ է, որ անոնց պարունակութիւնը 2016-ին ապրիլեան քառօրեայ պատերազմի օրերուն դպրոցներու ուսանողներուն կողմէ ուղարկուած օգնութիւնն էր՝ յառաջապահ գիծի զինուորներուն, ներառեալ անոնց գրուած նամակներ:

Պատգամաւորի հանգստեան տունը ունի նաեւ սեփական կենդանաբանական այգի, ուր կը պահուէին վագր, արջեր, ջայլամներ, եւ կախ նաեւ ձիարշաւարան: Ստացուած տուեալներու հիման վրայ պարզ դարձած է, որ ապրիլեան քառօրեայ պատերազմի մասնակից զինուորներուն համար նախատեսուած սնունդը Մանուէլ Գրիգորեան օգտագործած է սեփական կենդանաբանական այգիի կենդանիներուն կերակրելու նպատակով:

Միւս կողմէ, էջմիածինի քաղաքապետ Կարէն Գրիգորեան, որ

Շար.ը էջ 5

Նիկոլ Փաշինեան Նշած է Հայաստանի Զարգացման Երկու Կարեւոր Ազդակներ



ՀՀ վարչապետ «Սինոփսիս Արմենիա» ընկերութիւնը այցի ընթացքին

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան իր գործունէութեան երկու կարեւոր ուղղութիւնները կը նկատէ կաշառակերութեան դէմ պայքարն ու բարձր տեխնոլոգիաներու ոլորտի զարգացումը:

Այս մասին վարչապետը յայտարարած է «Սինոփսիս Արմենիա» ընկերութիւն այցի ընթացքին, որուն ներկայ եղած են նաեւ ընկերութեան աշխատակիցները:

«Կարծում եմ՝ սա խորհրդանշական փոփոխութիւն է մեր յարաբերութիւններում», - քսած է վարչապետը:

Փաշինեան նկատած է, որ

Շար.ը էջ 5

Կլէմտէլի Քաղաքապետական Խորհուրդը Հաստատեց «Արցախի Պողոտայի» Անուանումը

Կլէմտէլի Քաղաքապետական Խորհուրդը անցեալ շաբթուայ իր նիստի ընթացքին 4-ի դէմ 1 ձայնով հաստատեց Մերիլանտ պողոտայի մէկ հատուածը «Արցախի Պողոտայ» վերանուանելու որոշումը:

Քաղաքապետական Խորհուրդի նիստի ընթացքին եղան կողմ եւ դէմ ելոյթներ: Հայկական տարբեր կազմակերպութիւնները միանալով «Միացեալ Հայ Երիտասարդներ» կազմակերպութեան նախաձեռնութեան, կոչ ըրին քաղաքապետական Խորհուրդի անդամներուն վաւերացնել որոշումը եւ մեծ թիւով հայութեան ներկայութիւնը քաղաքէն ներս՝ արձանագրել յանուն պատմութեան:

Երեք ժամ տեւած քննարկումներու աւարտին Խորհուրդի բոլոր չորս Հայ անդամները քուէարկեցին անունի փոփոխութեան բանաձեւի օգտին:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Լուրջ քննարկում Արցախում. Ահա թե ինչու էր Մեկնել Նիկոլ Փաշինեանը

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

Մոսկուայից վերադարձից յետոյ վարչապետ Նիկոլ Փաշինեանը Յունիսի 16-ին մէկօրեայ այցով մեկնեց Արցախ: Այցի ընթացքում Նիկոլ Փաշինեանին ուղեկցող պաշտօնեաների կազմը յուշում էր, որ անհրաժեշտութիւնը ռազմա-քաղաքական է եւ օպերատիւ-գործնական: Փաշինեանին ուղեկցել են պաշտպանութեան նախարար Տօնոյեանը, գլխաւոր ռազմական տեսուչ Յակոբեանը, ԶՈՒ գլխաւոր շտաբի պետ Դաւիթեանը, ԱԽ քարտուղարն ու առաջին փոխվարչապետը:

Եղել է այց արեւելեան սահման, խորհրդակցութիւն Արցախի ՊԲ-ում, քննարկուել են հակառակորդին զսպելու մեխանիզմները: Միաժամանակ, Նիկոլ Փաշինեանը Արցախի նախագահ Բակօ Սահակեանի հետ հանդիպմանը Երեւանի անվերապահ աջակցութիւնն է յայտնել Արցախում բարեփոխում իրականացնելու նախագահ Սահակեանի քաղաքական կուրսին:

Մոսկուայում Փաշինեանը հանդիպել էր Փութինի հետ, որը երկրորդ հանդիպումն էր վարչապետութիւնից յետոյ: Ֆուտպոլի առիթով կազմակերպուած ընդունելութեանը Փութինը ծանօթացրել էր Փաշինեանին Ալիեւի հետ:

Երեւան վերադարձին Նիկոլ Փաշինեանը, նաեւ արտաքին հարցերի խորհրդական Արսէն Խառատեանը յայտարարեցին, որ Արցախի հարցը Մոսկուայում չի քննարկուել:

Միւս կողմից, Արսէն Խառատեանը յայտարարել էր, որ

քննարկուած հարցերի թւում եղել է ռազմա-տեխնիկական գործակցութիւնը, եւ մօտ ապագայում սպասուած են հետաքրքիր նորութիւններ այդ մասով:

Գործնականում, Մոսկուայում Արցախի հարց քննարկելու անհրաժեշտութիւն հայկական կողմը չունի: Կայ անվտանգութեան հարցեր քննարկելու անհրաժեշտութիւն: Եւ ոչ միայն Ատրպէյճանի պատճառով, որն ըստ տեղեկութիւնների կուտակուածներ ունի սահմանին:

Ընդհանրապէս, հայկական կողմի համար Արցախի հարց չկայ վաղուց: Այդ հարցը հայկական կողմը լուծել է՝ դէ ֆակտօ: Հայկական կողմը ունի անվտանգութեան հարց: Արցախն այդ հարցի մաս է, ընդ որում ոչ թէ խնդիր, այլ ռազմա-քաղաքական ռեսուրսային մաս: Ըստ այդմ, հայկական կողմը թէ Մոսկուայի, թէ Միւնստի խմբի համանախագահ եւ ընդհանրապէս միջազգային ուժային որեւէ կեդրոնի հետ քննարկման ենթակայ ունի անվտանգութեան հարց, ընդ որում փոխադարձաբար, քանի որ հայկական կողմի անվտանգութիւնը մի շարք պատճառներով անվտանգութիւն է նաեւ այդ կեդրոնների համար, նոյնիսկ այն դէպքում, երբ նրանց շահերը եւ անվտանգութեան խնդիրները շատ առումներով իրարամերժ են:

Կովկասում դրանց իւրօրինակ «հաբ» են հայկական երկու պետութիւնները, եւ այդ առումով Արցախի հարցը արտաքին հարթութեան մէջ պէտք է տեղաւորուի անվտանգութեան լայն փաթեթի

մէջ, որի դէպքում զուտ Արցախի մասով քննարկումների անհրաժեշտութիւնը գործնականում վերանում է:

Առանցքայինն այստեղ մնում է Ատրպէյճանին զսպելու հայկական կարողութիւնը, որը գլխաւոր փաստարկն է ուժային կեդրոնների հետ անվտանգութեան շուրջ քննարկումներում, իւրաքանչիւրի հետ իր մասով, այդ թւում Ռուսաստանի:

Այդ տեսանկիւնից ուշագրաւ է, որ Մոսկուա այցից յետոյ Նիկոլ Փաշինեանը մեկնել է Արցախ, բաւական ընդգծուած «անվտանգային շեշտադրումով»: Իրավիճակը անշուշտ առանձնայատուկ է նաեւ այն իրողութեան ֆոնին, որ Պաքուն ցուցաբերում է սահմանային կուտակումներ եւ շարժեր: Անկասկած է, որ Մոսկուայում «ծանօթութեան» ընդառաջ Ալիեւը այդպիսով փորձում էր հայկական կողմին դնել հոգեբանական ճնշման տակ, որը կարող էր ունենալ մէկ այլ նպատակ՝ հայկական կողմին ստիպել օժանդակութիւն «խնդրել» Փութինից, որը ներկայում զբաղուած է ֆուտպոլի աշխարհի առաջնութեամբ: Կասկածից վեր է, որ Փութինը պարզապէս նեարդայնանալու էր այդ հնարաւոր «խնդրանքից»:

Փութինն Ալիեւի հետ հանդիպմանը նրան ասել էր, որ երկկողմ հարցեր կը քննարկեն Օգոստոսի 30-ին Մոսկուա կատարելիք Ալիեւի այցի ընթացքում: Այլ կերպ ասած, Փութինը նաեւ Ալիեւին էր ակնարկել, որ չունի այդ ուղղութեամբ մինչեւ Սեպտեմբեր շեղուելու ցանկութիւն եւ մտադրու-

թիւն:

Նիկոլ Փաշինեանն էլ թերեւս գերծ է մնացել Ատրպէյճանի շանտաժին տրուելուց եւ Փութինին «անհարկի» խնդրանքից, ինչի վկայութիւնն էր յայտարարութիւնը, որ չի քննարկուել Արցախի հարց: Ալիեւը այդպիսով Մոսկուայում չի ստացել այն, ինչ թերեւս սպասում էր կամ ակնկալում: Յամենայն դէպս, Փութինը նրան ասել է, որ պէտք է սպասի մինչեւ Սեպտեմբեր:

Այդպիսով, հայկական կողմը Մոսկուա այցի ընթացքում կարողացել է ապահովել իրենից հասանելիքը, եւ յաջողիւ արդէն խնդրը Հայաստանում եւ Արցախում անհրաժեշտն ապահովելն է, որպէսզի Ալիեւը նաեւ Օգոստոսի 30-ից յետոյ Մոսկուայում չստանայ այն, ինչ ակնկալում է: Հայաստանում եւ Արցախում անելիքը առաւելագոյն, գերէֆեկտիվ կառավարումն է, եւ այդ տեսանկիւնից Արցախ այցի յատկանշական ֆոնային միւս հանգամանքն այն էր, որ դրան զուգահեռ ԱԱԾ-ն բացառապէսներ է արել գեներալ Մանուէլի ամառանցում, բացառապէսով ապրիլեան պատերազմի օրերին բանակի համար նախատեսուածի գողոնը:

Դա խիստ խորհրդանշական թիրախաւորում է, մի շարք առումներով: Յատկանշական է, որ այդ ամէնը զուգորդուել է Արցախ այցով եւ Արցախում նախագահ Բակօ Սահակեանին յայտնած անվերապահ աջակցութեամբ, ինչի դիմաց էլ Նիկոլ Փաշինեանը ստացել է թերեւս Արցախի իշխանութեան անվերապահ աջակցութիւնը Հայաստանում ծաւալած գործողութիւններին, հաշուի առնելով, թէ դրանք ինչպիսի շահարկումների կարող էին արժանանալ գեներալամերձ շրջանակներում:

«ԼՐԱԳԻՐ»

Խաղի Նոր Կանոնները Պիտի Յստակեցուեն

ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

«Նոր Հայաստանում» ապրելը գնալով աւելի ու աւելի հետաքրքիր է դառնում. ամէն առաւօտ հարիւր հազարաւոր մարդիկ արթնանալուն պէս քչփորում են համացանցը՝ տեսնելու, թէ ի՞նչ նոր բացայայտումներ են արել իրաւապահները, եւ ովքե՞ր են կալանաւորուել վերջին մի քանի ժամերի ընթացքում: Եւ պատկերացրէ՛ք՝ հիասթափութիւններ չեն լինում. նորանոր ձեռքարկութիւնների մասին տեղեկութիւնների պակաս չկայ:

Բայց «քոմենթները» գնալով աւելի ու աւելի ազրեւի են դառնում՝ «բա չեմ ինչի՞ն խի չէք բռնում», կամ «իսկ ե՞րբ է հերթը հասնելու այսինչ գիւղապետին, ով քարոզում էր ՀՀԿ-ի օգտին, հիմա էլ համայնքի փողերով իր բոստանն է ցանկապատում» եւ այլն:

Այո, նոր իշխանութիւնների գործունէութիւնը հասարակութեան խոշորացոյցի տակ է, եւ շատերն են փորձում սուբիեկտիւիզմի տարրեր գտնել: Իբր՝ օլիգարխներից առաջինը Մամուէլ Ալեքսանեանը հարուածի տակ ընկաւ, որովհետեւ խորհրդարանական ընտրութիւնների ժամանակ հենց նա էր Նիկոլ Փաշինեանի մրցակիցը, առաջին հարուածները նախկին վարչապետ Կարէն Կարապետեանի մտերիմների պիզնեսներին հասցուեցին, որովհետեւ Ապրիլի 23-ից յետոյ նա փորձեց վերցնել իշխանութիւնը, եւ այսպէս շարունակ:

Իսկ ի՞նչ անել, որ հասարակութեան մէջ նման կասկածներ

չառաջանան: Ելքը միակն է՝ պէտք է յստակ չափորոշիչներ սահմանել եւ դրանով իսկ բացառել սուբիեկտիւիզմի գործոնը: Բայց ի՞նչ չափորոշիչներ: Տարբերակները մի քանիսն են:

1. Սահմանել, որ բոլորն առանց բացառութեան պիտի նախկինում կատարած յանցանքների համար պատասխանատուութեան ենթարկուեն օրէնքի ամբողջ խստութեամբ: Բայց սրա հետեւանքները շատ ծանր կը լինէին: Պատկերաւոր ասած՝ Հայաստանի բնակչութեան կէսը կը յայտնուէր բանտերում: Վերցնենք թէկուզ ընտրակեդրիքների «դրուագները»:

2. Սահմանել, որ պատասխանատուութեան պիտի ենթարկուեն միայն նրանք, ում կատարած յանցանքները «խարխլել են պետականութեան հիմքերը», իսկ մանր-մունր քրէական յանցանքները կարելի է նաեւ մոռացութեան մատնել: Սա նոյնպէս մօտեցում է, միայն թէ ձեւակերպումների անորոշութիւնն ինքնին կոռուպցիոն ուիսկեր է պարունակում:

3. Սահմանել, որ քրէական պատասխանատուութեան են ենթարկուելու բոլոր նրանք, ովքեր տեսնական բնոյթի յանցագործութիւններով պետութեանը լուրջ վնաս են հասցրել: Ընդ որում՝ շատ յստակ արձանագրել, որ, ասենք, մէկ միլիարդ դրամից աւելի վնաս

հասցրածը պիտի վնասը վերականգնելուց յետոյ նաեւ յայտնուի բանտում, իսկ մէկ միլիարդից պակասի դէպքում՝ միայն վերականգնի վնասը, եւ վերջ (թուերը պայմանական են):

4. Սահմանել, որ ինքնակամ իրաւապահներին ներկայացածներն ու իրենց յանցանքը խոստովանածներն «ընկնելու են համաներման տակ» (հասկանալի է՝ բացի ծանր յանցագործութիւնների դէպքերից):

Մի խօսքով՝ տարբերակները շատ են: Բայց մի բան յստակ է՝ չափորոշիչներ անպայման պէտք են: Մարդիկ պիտի իմանան, թէ կոնկրետ որ քրէական յօդուածների դէպքում «ներում-բեկում» չի լինելու, իսկ որ դէպքերում կարող է գործել «սիրոյ եւ համերաշխութեան մթնոլորտը»: Վերջին հաշուով՝ խնդիրը միայն «օրէնքի տառին եւ ոգուն հետեւելը» չէ: Նախորդ իշխանութիւններն էլ «օրէնքի տառին եւ ոգուն հետեւելով» Շանթ Յարութիւնեանին խաղալիք պայթուցիկի համար 7 տարով ազատագրուած էին, իսկ Սիւնիքի մարզպետ Սուրբիկ Խաչատրեանին մարդասպանութեան գործով քիչ էր մնում տուժող ճանաչելին ու այդպէս էլ անգամ կէս ժամով չէր բեկալուցիւն: Խնդիրն այն է, որ հասարակութեան մէջ որեւէ կասկած չպէտք է լինի, որ կոռուպցիան արմատախիլ անելու անուան տակ թաւշեայ յեղափոխութեան առանձին «նուիրեալներ» իրենց անձնական հարցերն են լուծում:

«ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՍԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱԴԵԱՋԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՂԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ժիրայր Սեֆիլեան Եւ Սամուէլ Պապայեան Ազատ Արձակուեցան



Ժիրայր Սեֆիլեան

Սամուէլ Պապայեան

Վերաքննիչ քրէական դատարանը ազատ արձակած է «Հիմնադիր խորհրդարանի» առաջնորդ ժիրայր Սեֆիլեանի եւ միւսներու գործով անցնող բոլոր մեղադրեալները, ինչպէս նաեւ՝ Գէորգ Սաֆարեանը:

Վերաքննիչ բողոքի քննութիւնը աւարտած էր 11 յունիսին: Դատարանը կիսով չափ կրճատած է Սեֆիլեանի պատժաչափը՝ դարձնելով հինգուկէս տարի, ինչպէս նաեւ բաւարարած է Սեֆիլեանի խափանման միջոցը պատգամաւորներու երաշխաւորութեամբ փոխելու միջնորդութիւնը: Սեֆիլեան ազատ կ'արձակուի, երբ պատգամաւորներէն իւրաքանչիւրը 500 հազարական դրամ վճարէ:

Ազգային ժողովի «Ծառուկեան» խմբակցութեան 12 պատգամաւորներ, ինչպէս նաեւ՝ Նաիրա Զոհրապեան, Միքայէլ Մելքոնեան եւ այլոք, ինչպէս նաեւ «ԵԼՔ» խմբակցութեան պատգամաւոր Ալէն Սիմոնեան անձնական երաշխաւոր-

րագիրներ ներկայացուցած են ժիրայր Սեֆիլեանը ազատելու համար:

Լեւոնային Ղարաբաղի պաշտպանութեան նախկին նախարար Սամուէլ Պապայեան վճռաբեկ դատարանի հրապարակած որոշմամբ ազատ արձակուեցաւ կալանքէ՝ Ազգային ժողովի «ԵԼՔ» եւ «Ծառուկեան» խմբակցութիւններու խումբ մը պատգամաւորներու երաշխաւորութեան դիմաց:

Վճռաբեկ դատարանը փոխեց նաեւ գործով անցնող եւ անազատութեան մէջ գտնուող միւս երկու ամբաստանեալներու խափանման միջոց կալանքը՝ պատգամաւորներու անձնական երաշխաւորութեամբ եւ գրաւով:

Վճռաբեկը բեկանեց Վերաքննիչ դատարանի որոշումը Պապայեանի եւ միւսներու գործով ընդհանուր իրաւասութեան դատարանի վճիռը անփոփոխ թողնելու մասին՝ գործը ուղարկելով նոր քննութեան:

Ռոպէրթ Քոչարեան, Սերժ Եւ Լեւոն Սարգսեան Զրկուեցան Կիւմրիի Պատուաւոր Քաղաքացիի Կոչումէն

Կիւմրիի աւագանիի ընդդիմադիր «Կալա» խմբակցութեան նախաձեռնութեամբ աւագանիի նիստին Կիւմրիի պատուաւոր քաղաքացիի կոչումէն զրկուեցան Հայաստանի երկրորդ եւ երրորդ նախագահներ Ռոպէրթ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը: Այդ կոչումէն զրկուեցան նաեւ Սերժ Սարգսեանի աւագ եղբայրը՝ Լեւոն Սարգսեանը:

«Կալա» խմբակցութիւնը նաեւ ԱԱԾ նախկին տնօրէն Կորիկ Յակոբեանը Կիւմրիի պատուաւոր քաղաքացիի կոչումէն զրկելու նախագիծ ներկայացուցած էր, սակայն աւագանին մերժեց այն, քանի որ առաջարկուած էր անոր կոչումէն զրկել չետ մասու: Նախաձեռնութեան հեղինակներէն Լեւոն Բարսեղեան ըսած է՝ պէտք է մաքրուի պատուաւոր քաղաքացիներու ցուցակը: Ան կը պատրաստուի Կորիկ Յակոբեանին պատուաւոր քաղաքացիի կոչումէն զրկելու հարցը կրկին օրակարգ բերել:

«Կորիկ Գուրգէնի Յակոբեանի մասով ես շատ եմ որոնել հիմքեր՝ հասկանալու համար, թէ տեսնես Կիւմրի քաղաքին բերած ինչ օգուտներ չ'են համար է այս մարդն արժանացել այդ կոչմանը: Եթէ այս որոշումը կը մերժուի, յաջորդ նիստին ենք առաջարկելու, յաջորդ նիստին կը մերժուի, յաջորդին ենք ներկայացնելու: Այնքան ժամանակ, մինչեւ Կիւմրիի

պատմութիւնը մաքրագործուի: Ժամանակին արել են, սխալ են արել, սխալուած են եղել, ճշունքներ թակ են եղել եւ այլն, հարկաւոր է ազատուել այս ծանր ժառանգութիւնից», - ըսած է Լեւոն Բարսեղեան:

Ռոպէրթ Քոչարեանին 2002 թուականին շնորհած են այդ կոչումը: Այն հիմնաւորմամբ, թէ «Լինսի» հիմնադրամի միջոցներով Կիւմրիի մէջ իրականացուած է բնակարանաշինական մեծ ծրագիր: Սերժ Սարգսեանն ալ այդ կոչման արժանացած է 2006 թուականին, երբ պաշտպանութեան նախարար էր: Թէ ինչու անոր կոչում շնորհուած է, որեւէ հիմնաւորում չ'են ներկայացուած:

Սերժ Սարգսեանի եղբորը՝ Լեւոն Սարգսեանին որպէս «Փիւնիկ» հիմնադրամի տնօրէն Կիւմրիի պատուաւոր քաղաքացիի կոչում շնորհելու շուրջ 2 տարի առաջ մեծ աղմուկ բարձրացաւ: Անոր այդ կոչումը կը շնորհէին հիմնաւորմամբ, թէ «Վերածնունդ» երաժշտական միջազգային փառատօնը Կիւմրիի մէջ կը կատարէ: Պարգուած է սակայն, որ այդ մրցոյթին մասնակցիլը անվճար չ'է եղած:

Կիւմրեցիները դեռ 2 տարի առաջ շուրջ 2000 ստորագրութիւն հաւաքած են՝ Լեւոն Սարգսեանը պատուաւոր քաղաքացի կոչումէն զրկելու հարցը աւագանիի նիստի օրակարգ ընդգրկելու համար:

Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը Յատուկ Գործողութիւններ Իրականացուցած է Երեւանի Քաղաքապետարանէն Ներս

Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը (ԱԱԾ) Յատուկ Գործողութիւններ Իրականացուցած է Երեւանի Քաղաքապետարանի մէջ:

Այդ մասին ԱԱԾ մամուլի կեդրոնը հաղորդագրութիւն տարածած է, որու մէջ մասնաւորապէս ըսուած է. - «Հայաստանի Հանրապետութեան ազգային անվտանգութեան ծառայութեան մէջ հաղորդում ստացուած է ՀՀ քաղաքացիներ Վ.Գ.-էն եւ Ա.Խ.-էն այն մասին, որ Երեւանի քաղաքապետարանի պաշտօնատար անձինք, կառուցապատման եւ գոյքի ձեւակերպման համապատասխան թոյլտուութիւններ տրամադրելու դիմաց, բացի օրէնքով սահմանուած վճարումներէն, իրենց պարտադրած են «Երեւան» հիմնադրամին փոխանցել խոշոր չափերով գումարներ: Նիւթերու նախապատրաստման ընթացքին պարզուած է, որ վերոնշեալ պատրուակով առձեռն ստացուած գումարներու մասը մը հիմնադրամի հաշուհամար չ'է մուտքագրուած եւ յափշտակուած է: Յանցագործութեան մասին հաղորդումներու հիման վրայ ՀՀ ԱԱԾ քննչական վարչութեան մէջ յարուցուած է քրէական գործ ՀՀ

քրէական օրէնսգրքի 308-րդ յօդուածի 2-րդ մասի («Պաշտօնական լիազօրութիւնները չարաչահելը, որն անզգուշութեամբ առաջացրել է ծանր հետեւանքներ») եւ 178-րդ յօդուածի 2-րդ մասի 1.1 կէտի («Պաշտօնական դիրքն օգտագործելով կատարուած խարդախութիւն») յատկանշներով»:

ԱԱԾ-ն կը փոխանցէ, որ Երեւանի քաղաքապետարանի վարչական շէնքի մէջ տեղակայուած «Երեւան» հիմնադրամի աշխատասենեակներու մէջ քրէական գործով կատարուած են խուզարկութիւններ: Իրականացուած են լայնածաւալ հետախուզական միջոցառումներ եւ քննչական գործողութիւններ՝ քաղաքացիներէն գումարներու հաւաքագրման հանգամանքները, ծախսերու ուղղութիւնները եւ նպատակայնութիւնը, ինչպէս նաեւ օրինականութիւնը պարզելու ուղղութեամբ:

Յիշեցնենք, որ օրեր առաջ կրթութեան եւ գիտութեան նախարար Արայիկ Յարութիւնեան ֆէյսպուքեան իր էջի վրայ գրած էր, որ Երեւանի աւագանիի առաջիկայ նիստին ներառուած է «Երեւան» հիմնադրամ լուծարելու հարցը:

Յեռուստեսիլի Վերաբերեալ Վարչապետի Գրառման Մասին Տարբեր Կարծիքները

«Առաւօտ» օրաթերթի առցանց տարբերակի խմբագիր Աննա Իսրայէլեանի կարծիքով՝ վարչապետի՝ հեռուստաընկերութիւններուն ուղղուած կոչը ճիշդ չ'էր:

«Ճիշդ կը լինի, որ պարոն Փաշինեանն ունկնդիր լինի այն կոչին, որը Երեւանի պետական համալսարանում արեց իր կինը՝ Աննա Յակոբեանը՝ «Թողէք մամուլն աշխատի», - Tert.am-ի հետ զրոյցին ըսած է ան:

Աննա Իսրայէլեան ըսած է. «Կը կարծեմ, որ ճիշդ չ'է, որ վարչապետը կամ որեւէ պետական պաշտօնեայ մամուլի դէմ այդպիսի կոչերով հանդէս գայ: Առանց այդ էլ նոր իշխանութեան ձեւաւորումից յետոյ լրատուամիջոցները չափազանց վատ պայմաններում են գործում, երբ ցանկացած քննադատական խօսք փորձ է արւում լուցնել նոր իշխանութեան աջակիցներին կողմից: Ես զիտեմ, որ դա կազմակերպուած չ'է, ինքնաբերական է,

մարդիկ իսկապէս ուզում են պաշտպանել, բայց այս պայմաններում պետական պաշտօնեայի կողմից յաւելեալ մի խօսքն առաւել կը սաստկացնի միջոցառումը»:

Լրագրողներու «Ապարէզ» ահուճքի նախագահ Լեւոն Բարսեղեան, սակայն, վարչապետի կոչի մէջ ՉԼՄ-ներու սահմանափակում չ'ի տեսներ: Ըստ Բարսեղեանի՝ սահմանափակում կրնայ ըլլալ հրամանը, կարգադրութիւնը:

Հեռուստաընկերութիւններու մասին վարչապետի գրառման արձագանգած է նաեւ Խօսքի ազատութեան պաշտպանութեան կոմիտէն: ԽԱՊԿ յայտարարութեան մէջ, մասնաւորապէս, ըսուած է, որ ցանկացած իշխանութիւն պէտք է առաւել հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերէ լրատուամիջոցներու հրապարակումներուն եւ անոնց մէջ տեղ գտած զնահատականներուն նկատմամբ:

«Եթէ Պարզուի, Որ Հակասահմանադրական է, Քաղաքացիները Մինչեւ Վերջին Կոպէկը Ետ Կը Ստանան» Փաշինեան Կուտակային Մասին

«Մենք այս իրավիճակում կայացրել ենք այն որոշումը, որը բխում է մեր բոլորի շահերից», - ֆէյսպուքեան ուղիղ տեսակապի միջոցով յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ օգտատէրերու խնդրանքով անդրադառնալով կառավարութեան Յունիս 11-ի նիստին ընդունուած «Կուտակային կենսաթոշակներու մասին» օրէնքի մէջ փոփոխութիւններ կատարելու առաջարկին:

Վարչապետի պնդմամբ՝ հնարաւոր տարբերակներէն կայացուած է ամենափոխզիջումային որոշումը. - «Մենք էս որոշումը կայացրել ենք, որպէսզի հանդարտ

պայմաններում, առանց ցնցումների, մենք հասկանանք էս համալարգի ամբողջ էութիւնը, սահմանադրականութիւնը, յետագայ ճակատագիրը որոշելու խնդիրը: Եթէ երկու ամսից, նոյնիսկ երեք ամսից կը պարզուի, որ սա չ'ի կարող լինել ինչ-ինչ-ինչ պատճառներով, որովհետեւ հակասահմանադրական է, որեւէ ողբերգութիւն չ'կայ: Այդ բոլոր գումարները բոլոր վճարած քաղաքացիները մինչեւ վերջին կոպէկը կարող են ետ ստանալ, որովհետեւ այդ գումարները էսօր ճշգրիտ կան, գոյութիւն ունեն եւ դրուած են ձեր անձնական հաշիւներին», - ըսած է Փաշինեան:

ԼՈՒՐԵՐ

Բալի Սահակեան.

«Անվերապահօրէն Սատարում Ենք Մայր Զայաստանում Ժողովրդավարութեան Ու Օրինականութեան Ամրապնդմանը»



Բալի Սահակեան եւ Նիկոլ Փաշինեան կը գլխաւորեն անցեալ շաբաթ Ստեփանակերտի մէջ տեղի ունեցած խորհրդակցական հանդիպումը

Լեռնային Ղարաբաղի նախագահ Բալի Սահակեան 18 Յունիսին նամակ յղած է Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանին, այս մասին տեղեկացուցած է ԼՂ նախագահի պաշտօնական կայքը:

Բալի Սահակեանը շնորհակալութիւն յայտնած է Փաշինեանին՝ 16 Յունիսին 17-ը Արցախ այցելելու իր հրահրելը ընդունելու համար եւ «շատ կարեւոր ու բովանդակալից» զննատարած տեղի ունեցած քննարկումները: «Ուզում եմ նաեւ շնորհակալութիւն յայտնել մեր հանդիպման ընթացքում Ձեր արտայայտած դիրքորոշման համար, որ Դուք ողջունում ու կարեւորում էք իրական եւ բովանդակալի փոփոխութիւններ իրականաց-

նելու Արցախի Նախագահի պատրաստակամութիւնը», - նշած է ԼՂ նախագահը:

Համոզմունք յայտնելով, որ «այսուհետ եւս էլ աւելի կ'ընդլայնուի հայկական երկու հանրապետութիւններու սերտ փոխգործակցութիւնը», Բալի Սահակեան նաեւ ընդգծած է, որ Արցախի իշխանութիւնները եւ անձամբ ինքը «անվերապահօրէն» կը սատարեն «Հայաստանում ժողովրդավարութեան ու օրինականութեան ամրապնդմանը, ինչպէս նաեւ ստորադասարանական հակամարտութեան կարգաւորման գործընթացում բանակցային լիարժէք ձեւաչափի վերականգնմանն ուղղուած Ձեր սկզբունքային քաղաքականութեանը»:

«ԱՄՆ-ն Փորձած է Այնպէս Ընել, որ Պատժամիջոցները Շատ Չազդեն ՌԴ-ի Զետ Աշխատող Սեր Բարեկամներու Վրայ».

«Հաւատացէք, Միացեալ Նահանգները եւս կը ցանկանայ Ռուսիոյ հետ աւելի լաւ յարաբերութիւններ ունենալ»: «Շանթ» հեռուստաընկերութեան եթերէն աչպիսի յայտարարութիւն ըրած է ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ռիչարտ Միլզ՝ անդրադառնալով հարցին, թէ ԱՄՆ-Ռուսիա յարաբերութիւնները ինչպէ՞ս կ'անդրադառնան Հայաստան-Միացեալ Նահանգներ յարաբերութիւններու վրայ, քանի որ ՌԴ-ն ՀՀ-ի դաշնակիցն է:

«Անկեղծ ըսած՝ ինծի համար անհանգստացնող էր Ռուսիոյ ոչ պատասխանատու վարքագիծը աշխարհի տարբեր հատուածներում մէջ՝ Ուքրանիոյ մէջ, Ղրիմի, Սուրիոյ, միջամտութիւնը Միացեալ Նահանգներու ընտրութիւններուն, նաեւ այլ երկիրներու ընտրութիւններուն: Բայց մենք շատ յստակ ենք այն առումով, որ այն ասպարէզներու մէջ, ուր Ռուսիան եւ Միացեալ Նահանգները ունին ընդհանուր նպատակներ, ընդհանուր հետաքրքրութիւններ, մենք պատրաստ ենք իրար հետ աշխատելու, այդ նպատակներու ուղղութեամբ առաջ շարժելու»:

Ինչ կը վերաբերի Հայաստան-Միացեալ Նահանգներ յարաբերութիւններու վրայ Ռուսաստան-Միացեալ Նահանգներ յարաբերութիւններու ազդեցութեան, դես-

պանի խօսքով՝ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը եւ ԱՄՆ դեսպանատունը կը փորձեն այնպէս չընել, որ Հայաստանը դառնայ Մոսկուայի եւ Ուաշինգթոնի միջեւ կռիւի ասպարէզ:

«Մենք կը գիտակցինք, որ Ռուսիան մշտապէս պիտի ըլլայ կարեւոր գործընկեր Հայաստանի համար, մշակութային, պատմական կապ կայ այս երկիրներու միջեւ: Մենք կը ցանկանանք, որ Հայաստանը կարողանայ իր յարաբերութիւնները ձեւաւորել, իր դուռը բաց պահել բոլորի համար, յարաբերութիւններ ունենալ Մոսկուայի հետ եւ միաժամանակ մեզի հետ իր յարաբերութիւնները պահպանել, Պրիւսիայի, Փեքինի հետ: Այս յարաբերութիւնները մէկը միւսին չեն բացաւր», - ըսած է ան:

Անդրադառնալով հարցին, թէ Ռուսիոյ նկատմամբ Միացեալ Նահանգներու պատժամիջոցները կ'ազդեն արդե՞ք Հայաստանի տնտեսութեան վրայ, դեսպանը պատասխանած է. «Միացեալ Նահանգները փորձած է այնպէս ընել, որ այս պատժամիջոցները հնարաւորինս թիրախաւորուած ըլլան, ճշգրիտ կառուցվածքով եւ անհատներու ուղղուած ըլլան, որ շատ չըլլայ անոնց ազդեցութիւնը Ռուսիոյ այլ օղակներու, ինչպէս նաեւ մեր միւս բարեկամներու նկատմամբ, որոնք Ռուսիոյ հետ կ'աշխատին»:

Մոսկուան կը Ցանկայ «Սու 30 ՍՍ» Մարտական Ինքնաթիռներ Մատակարարել Երեւանին



Վարչապետ Փաշինեան «Սու-30ՍՍ» կործանիչներն մեկուց մէջ

Հայաստանի մէջ իշխանափոխութենէն առաջ ՀՀ ՊՆ-ն ռուսական «Սու-30ՍՍ» կործանիչներու ձեռքբերման հարցը յետաձգուած էր մինչեւ 2024 թուական: Պայմանագիրը, որ առնուազն մէկ խմբաքանակի մատակարարում կը նախատեսէ, ստորագրուած էր 2012 թուականին, սակայն այդպէս ալ ուժի մէջ չէր մտած՝ պատուիրատուի նիւթական դժուարութիւններու պատճառով:

Ըստ պարբերականի Ռուսիան կ'ակնկալէ իրականացնել համաձայնագիրը արդէն Հայաստանի նոր ղեկավարութեան հետ: Վարչապետ Նիկոլ Փաշինեան արդէն նստած է «Սու-30ՍՍ»-ի խցիկի մէջ եւ այն «աշխարհում լավագոյններէն մէկ»ը անուանուած է:

Խօսակցութիւնները այն մասին են, որ Հայաստանը կը ցանկանայ «Սու-30ՍՍ» ձեռք բերել, կրկին աշխուժացան, երբ Նիկոլ Փաշինեան իր ֆէյսպուքեան էջին տեղադրած է ինքնաթիռով լուսանկարը, որ կը գտնուի էրեբունիի ռազմական օդակայանի մէջ (այնտեղ տեղակայուած է 3624-րդ ռուսական ռազմակայանը):

Ինչպէս «կոմերսանտ»-ի հետ զրոյցի ընթացքին պատմած են ինքնաթիռներու արդիւնաբերութեան մի քանի տնօրէններ, հայկական զինուած ուժերը սկսած են հետաքրքրութիւն ցուցաբերել «Սու-30ՍՍ»-ի նկատմամբ դեռ 2010 թուականին՝ Օդային ուժերու պարկի արդիականացման անհրաժեշտութեան պատճառով:

Աւելին, մօտ 2012 թուականին Մոսկուան եւ Երեւանը ստորագրեցին պայմանագիր, որու համաձայն, Հայաստանը քանի մը տարուան ընթացքին պէտք է առնուազն 12 կործանիչ ստանար (անոնց մա-

տակարարման թույլտուութիւնը, ըստ «կոմերսանտ»-ի, ճիշդ այդ ժամանակ տրուած է Վլատիմիր Փութինի կողմէ): Սակայն համաձայնագիրը այդպէս ալ իրականութիւն չդարձաւ յաճախորդի նիւթական դժուարութիւններու պատճառով: Այդ ժամանակէն ի վեր կողմերը պարբերաբար եւ անյաշող կերպով քննարկած են պայմանագրի գործնական իրականացման հեռանկարները:

Ընդ որում, ինքնաթիռներէն բացի (Մոսկուայի մէջ կը փորձէին լուծել Երեւանի նիւթական խնդիրը՝ թոյլ տալով գնել ինքնաթիռները ներուստաստանեան զիներով, այլ ոչ թէ՛ արտահանման) Հայաստանին անհրաժեշտ էր գնել նաեւ այլ սպառազինութիւն: Այդպէս, օրինակ, Երեւանը առաջինը ձեռք բերաւ «Իսկանդեր» նորագոյն մարտավարական հրթիռային համալիրը, ինչպէս նաեւ ռուսական վարկերու հաշիւին 300 միլիոն տոլարի գէնք ձեռք բերաւ: Ըստ «կոմերսանտ»-ի՝ «Սու-30ՍՍ»-ի գնման թեմային կողմերը վերջին անգամ անդրադարձած են Հայաստանի մէջ յեղափոխութենէն քանի մը ամիս առաջ:

Այդ հանդիպմանն ալ ՀՀ պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչները ռուս բանակցողներուն յայտնեցին, որ աւելի շուտ կնքուած պայմանագիրով նախատեսուած ինքնաթիռներու ձեռքբերումը կը յետաձգուի եւս վեց տարի, այսինքն՝ մինչեւ 2024 թուական: Ռազմատեխնիկական համագործակցութեան ոլորտի մէջ աղբիւրներու համաձայն՝ արդէն յեղափոխութենէն եւ իշխանափոխութենէն յետոյ երկու երկրներու մասնագէտներու միջեւ գէնքի արտահանման վերաբերեալ շփումներ չեն եղած:

NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

Garine Depoyan

626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepoyan@gmail.com

Մինսկի խումբի Յանախանյանի Բնարկում է Նախարարներու Հանդիպման Հնարաւորութիւնը



ԵԱՀԿ Մինսկի խումբի համա- նախագահները քննարկած են դա- րաբաղեան խնդիրի կարգաւորման շուրջ նախարարներու մակարդա- կով հանդիպում կազմակերպելու հնարաւորութիւնը, նշուած է միջ- նորդներու՝ տարածած յայտարա- րութեան մէջ:

Ամփոփելով անցած երկու օրե- րուն Երեւանի մէջ տեղի ունեցած հանդիպումները, համանախագահ- ներ իկոր Պոպովը, Էնտրու Շոֆէրը եւ Ստեֆան Վիսկոնթին նշած են՝ «դիտարկած են բանակցութիւն- ներու կարգավիճակն ու քննարկած գործընթացը առաջ մղելու ուղ-

ղութեամբ յետագայ քայլերը, ինչ- պէս նաեւ՝ մօտ ապագային նախա- րարական հանդիպման կազմակեր- պումը»:

Ամփոփելով վարչապետ Նիկոլ Փաշինեանի կառավարութեան հետ բանակցութիւնները՝ միջնորդնե- րը նշած են, Հայաստանի պաշտօն- եանները իրենց աջակցութիւնը յայտ- նած են Մինսկի խումբի ու ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներ- կայացուցիչի աշխատանքներուն, ինչպէս նաեւ պատրաստակամու- թիւն յայտնած շարունակելու ար- դիւնակէտ աշխատանքը համանա- խագահներու հովանիի ներքոյ:

Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը Յատուկ Գործողութիւններ Իրականացուցած է Երեւանի Քաղաքապետարանի Մէջ

Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը (ԱԱԾ) Յատուկ Գործողութիւններ Իրականացու- ցած է Երեւանի Քաղաքապետարա- նի մէջ:

Այդ մասին ԱԱԾ մամուլի կեդրոնը հաղորդագրութիւն տա- րածած է, որու մէջ մասնաւորապէս ըսուած է. «Հայաստանի Հանրա- պետութեան ազգային անվտան- գութեան ծառայութեան մէջ հա- ղորդում ստացուած է ՀՀ քաղաքա- ցիներ Վ.Գ.-էն եւ Ա.Ս.-էն այն մասին, որ Երեւանի քաղաքապե- տարանի պաշտօնատար անձինք, կառուցապատման եւ գոյքի ձեւա- կերպման համապատասխան թոյլ- տուութիւններ տրամադրելու դի- մաց, բացի օրէնքով սահմանուած վճարումներէն, իրենց պարտադ- րած են «Երեւան» հիմնադրամին փոխանցել խոշոր չափերով գու- մարներ: Նիւթերու նախապատ- րաստման ընթացքին պարզուած է, որ վերոնշեալ պատրուակով առ- ձեռն ստացուած գումարներու մա- սը մը հիմնադրամի հաշուհամար չէ մուտքագրուած եւ յափշտակ-

ուած է: Յանցագործութեան մասին հաղորդումներու հիման վրայ ՀՀ ԱԱԾ քննչական վարչութեան մէջ յարուցուած է քրէական գործ ՀՀ քրէական օրէնագրքի 308-րդ յօդ- ուածի 2-րդ մասի («Պաշտօնէա- կան լիազօրութիւնները չարաչա- հելը, որն անզգուշութեամբ առա- ջացրել է ծանր հետեւանքներ») եւ 178-րդ յօդուածի 2-րդ մասի 1.1 կէտի («Պաշտօնական դիրքն օգ- տագործելով կատարուած խարդա- խութիւն») յատկանիշներով»:

ԱԱԾ-ն կը փոխանցէ, որ Երե- ւանի քաղաքապետարանի վարչա- կան շէնքի մէջ տեղակայուած «Երե- ւան» հիմնադրամի աշխատանք- եակներու մէջ քրէական գործով կատարուած են խուզարկութիւն- ներ: Իրականացուած են լայնածա- ւալ հետախուզական միջոցառում- ներ եւ քննչական գործողութիւն- ներ՝ քաղաքացիներէն գումարներու հաւաքագրման հանգամանք- ները, ծախսերու ուղղութիւնները եւ նպատակայնութիւնը, ինչպէս նաեւ օրինականութիւնը պարզելու ուղղութեամբ:

Բացայայտումները Ցնցեց Հայաստանը

Շարունակուած էջ 1-էն
որդին է Մանուէլ Գրիգորեանի, յայտարարեց, որ հրաժարած է իր պաշտօնէն: Կարէն Գրիգորեանի հրաժարականի պահանջով վերջին օրերուն էջմիածինի մէջ տեղի կ'ունենային բողոքի ցոյցեր, որոնք կազմակերպուած էին Ռուսաստա- նէն վերջերս վերադարձած Օննիկ Ասատրեանի կողմէ, որ գողական աշխարհի մէջ ծանօթ է «Տօն

Պիպօ» ծածկանունով:
Կարէն Գրիգորեանի կողմնա- կիրցները եւս փողոց դուրս եկած էին, քաղաքը բաժնելով երկու մասի: Մտավախութիւն կար որ երկու կողմերուն միջեւ տարա- կարծութիւնները կրնան վերած- ունի զինեալ բախումներու, մա- նաւանդ որ անցեալին քաղաքին մէջ տեղի ունեցած էին սպանու- թիւններ:
Յունիս 16-ին, խուզարկուած

Դաւիթ Պապայեան.- Ատրպէյճանի Զինուծի Ստորաբաժանումներու Կուտակումներ Շփման Գիծի Մօտ



Ատրպէյճանական կողմը կու- տակումներ կ'իրականացնէ շփման գիծի գրեթէ ողջ երկայնքով՝ սահ- մանամերձ շրջաններու վրայ տե- դակայելով ստորաբաժանումներ, որոնց մշտական տեղակայման վայ- րը կը գտնուի Ատրպէյճանի խոր- քերը: Այդ մասին «Ազատութեան» հետ զրոյցին ըսած է Լեւոնային Ղարաբաղի նախագահի աշխատա- կազմի ղեկավարի տեղակալ Դա- ւիթ Պապայեան:

Ըստ Պապայեանի, 2016 թուա- կանի Ապրիլին նման բան չէր նկատուած:

«Ազատութիւն».- Պարոն Պա- պայեան, Լեւոնային Ղարաբաղի պաշտպանութեան նախարարու- թիւնը հաղորդագրութիւն տարածեց՝ նշելով, որ վերջին օրերուն Ղարա- բաղի եւ Ատրպէյճանի հակամարտ զօրքերու շփման գիծի տարբեր հատ- ուածներու վրայ նկատուած են հա- կաւակորդի գիտնելիսիկայի եւ մարդ- կային ուժի աշխոյժ տեղաշարժեր եւ կուտակումներ: Ի՞նչ տեղի կ'ունե- ցայ, արդեօք այս կը խօսի հնարա- ւոր ռազմական գործողութիւններու վերսկսման մասին:

Պապայեան.- Գիտէք, ապրիլ ամիսէն անոնք կուտակումներ իրականացուցած են սահմանի գրե- թէ ողջ երկայնքով եւ տեղակայած են սահմանամերձ շրջաններու մէջ ստորաբաժանումներ, որոնց մշտա- կան տեղակայման վայրը կը գտնուի Ատրպէյճանի Հանրապե- տութեան խորքերը: Իսկ վերջին քանի մը օրուան ընթացքին ընդ- հանրապէս աշխուժացած է տեղա- շարժը այդ ստորաբաժանումնե- րու: Ի հարկէ, Արցախի Պաշտպա- նութեան բանակը ամէն ինչ կ'ընէ,

համապատասխան քայլեր կը ձեռ- նարկէ՝ հաւասարակշռուածու- թիւնը պահպանելու, ռազմավա- րական նախաձեռնողականութիւնը մեր ձեռքերու մէջ պահելու ուղ- ղութեամբ:

«Ազատութիւն».- Ի՞նչ ստորա- բաժանումներու մասին է խօսքը:

Պապայեան.- Տարբեր ստո- րաբաժանումներ, որոնց տեղակայ- ման վայրը կը գտնուի, ըսենք, Պաքուի, Շեմախի մէջ եւ այլ տեղեր, այսինքն՝ Ատրպէյճանի խոր- քը, որոնք տեղակայուած չեն սահ- մանամերձ շրջաններու մէջ, եւ 2016 թուականի ապրիլ ամիսէն նման բան չէր նկատուած:

«Ազատութիւն».- Այդ աշխու- ժացումը խորքերը նկատուած է, թե՞ արդէն շփման գիծի վրայ:

Պապայեան.- Ձէ, խորքէն ստորաբաժանումները բերած են առաջնագիծի մօտ:

«Ազատութիւն».- Վերջին օրե- րու այդ աշխուժացման մասին որ խօսեցանք, սահմանի երկայնքով է այդ աշխուժացումը:

Պապայեան.- Որոշ հատուած- ներու վրայ. բնական է, լեւոնային հատուածներու վրայ այնքան չէ, աւելի շուտ արեւելեան շրջաննե- րու մէջ է, ուր աշխարհագրու- թիւնը տափաստանային է:

Նշենք՝ 12 Յունիսին Լեւոնա- յին Ղարաբաղի ռազմական գերա- տեսչութիւնը հաղորդած էր, որ «վերջին օրերուն արցախա-ատր- պէյճանական հակամարտ զօրքերու շփման գիծի տարբեր հատուածնե- րու մէջ կը նկատուին նաեւ հակա- ռակորդի գիտնելիսիկայի եւ մարդ- կային ուժի աշխոյժ տեղաշարժեր ու կուտակումներ»:

Նիկոլ Փաշինեան Նշած է

Շարունակուած էջ 1-էն
բարձր տեխնոլոգիաներու ոլորտը կը կտրէ անհնարինի սահմանն ու կ'ընդլայնէ հնարաւորի շրջանա- կը: «Ես այսպիսի խորհրդանշա- կան պատկեր ունեմ իմ մտքում: Եթէ իմ տեսադաշտում գտնուող որեւէ մէկի բարեկեցութեան մա- կարդակը աճում է, սովորաբար դա կապուած է երկու դէպքի հետ. կամ այդ մարդը ներգրաւուած է կաշա- ռակերութեան մէջ, կամ բարձր տեխնոլոգիաների ոլորտի մէջ: Դրա համար էլ իմ գործունէութեան երկու ամենակարեւոր ուղղութիւն- ներն ու ուշադրութիւնը կեդրոնա- ցած են կուտակցիկայի (կաշառակե- րութիւն) ու բարձր տեխնոլոգիա-

ների հետ կապուած խնդիրներու վրայ: Առաջին դէպքում՝ մտայ- նութիւնն այն է, թէ անհնար է, միեւնոյն է՝ ոչինչ չի փոխուի, որեւէ յոյս չկայ: Երկրորդ խորհր- դանիշն ասում է, որ անհնար ոչինչ չկայ: Դրա համար էլ մենք կարե- ւորում ենք բարձր տեխնոլոգիա- ները, քանի որ դա ընդլայնում է հնարաւորի սահմանը», - նշած է վարչապետը:

Նիկոլ Փաշինեան խօսած է արտագաղթի մասին, բայց ոչ եր- կիրը լքելու, այլ հին իրականու- թեան նոր իրականութիւն արտա- գաղթելու մասին: Ըստ վարչապե- տի բարձր տեխնոլոգիաներու ոլոր- տի մասնագէտները անոր առաջա- մարտիկն են:

էր նաեւ «Տօն Պիպոյի» էջմիածի- նի բնակարանը, ուր եւս յայտնա- բերուած էր գէնք եւ զինամթերք:

Այս խուզարկութեան հիման վրայ Օննիկ Ասատրեան եւս ձեռքա- կալուած է եւ կը մնայ կալանքի տակ:

Եւրոպացի Գործիչները Կաշառելու Համար Իլիամ Ալիեւը Թալանած է Ատրպէյճանի Աւանդատուները



Կազմակերպուած յանցագործութեան եւ կաշառակերութեան լուսաբանման նախագիծի (Organized Crime and Corruption Reporting Project) (OCCRP) հաղորդմամբ՝ Ատրպէյճանի իշխող վերնախաւի ներկայացուցիչները 2012-2014-ն ինկած ժամանակահատուածին կեղծ բրիտանական ընկերութիւններու միջոցով երկրէն մօտ 3 միլիարտ տոլար հանած են, որ օգտագործուած է եւրոպական տարբեր պաշտօնեաներու կաշառելու, ինչպէս նաեւ թանկարժէք ապրանքներ ձեռք բերելու համար:

OCCRP-ի հետաքննութիւններու համար հիմք հանդիսացած է շարք մը միջազգային լրատուամիջոցներու անանուն աղբիւրներու կողմէ տրամադրուած դրամատնային փաստաթղթեր:

Ատրպէյճանէն կաշառք ստացած եւրոպացի գործիչներու մէջ եղած են Գերմանական Պոլիտեխնիկի պատգամաւոր, որ Ատրպէյճանի մէջ բազմաթիւ ընտրախախտումներով կայացած ընտրութիւններու վերաբերեալ դրական գեկոյց պատրաստած է, ԵՆԽՎ անդամ, որ փորձած է խոչընդոտել Ատրպէյճանի քաղբանտարկեալներու վերաբերեալ գեկոյցի ընդունման եւ նոյնիսկ ՅՈՒՆԵՍԿՕ-ի տնօրէն, պուլկարացի քաղաքական գործիչ Իրինա Բոկովան եւ անոր ամուսինը՝ «Ատրպէյճանը հանդուրժողականութեան տարածք» խորագիրով ցուցահանդէսը կազմակերպելու համար:

Եւրոպայի մէջ Ատրպէյճանի հեղինակութիւնը բարձրացնելու նպատակով եւրոպական գործիչ-

ները կաշառելու գործելաոճին ատրպէյճանցի դիւանագէտները տուած են «խաւիարային դիւանագիտութիւն» անուանումը: Նախքան ալ «խաւիարային դիւանագիտութեան» շրջանակի մէջ ատրպէյճանցի պաշտօնեաները թանկարժէք իրերու եւ մեծ քանակութեամբ սեւ խաւիարի միջոցով փորձած են կաշառել եւ ազդել տարբեր երկրներու ներկայացուցիչներու որոշումներու վրայ, որոնք կարեւոր եղած են Ատրպէյճանի համար:

Ի տարբերութիւն նախքան տարուած «խաւիարային դիւանագիտութեան», երբ կաշառքները հիմնականին նուէրներու եւ սեւ խաւիարի տեսքով էին, կազմակերպուած յանցագործութեան եւ կաշառակերութեան լուսաբանման նախագիծի (Organized Crime and Corruption Reporting Project) կողմէ կատարուած վերջին բացայայտումներու մէջ խօսքը բացառապէս գումարային կաշառքներու մասին է, որոնք, ըստ պնդումներու, գողցուած են ատրպէյճանական ամենամեծ՝ Ատրպէյճանի միջազգային դրամատուների աւանդատուներէն:

Որպէս արդիւնք Ատրպէյճանի միջազգային դրամատուները 2017 թ. սնանկ ճանչցուած է եւ չէ կարողացած անգամ կատարել իր պարտաւորութիւնները: Ատրպէյճանի իշխանութիւններու կողմէ իրականացուած օտարերկրեայ ապօրինի գործողութիւններու վերաբերեալ OCCRP-ի կատարած նոր բացայայտումները ստացած են «Ատրպէյճանական լուսագբատուն» անուանումը:

Թուրքիոյ մէջ Կիրակի Կայանալիք Ընտրութիւններուն Էրտողան Կ'ընթանայ «Թուլացած Դիրքերով»



Ամիսներ առաջ, երբ Թուրքիոյ նախագահը որոշած է արտահերթ համապետական ընտրութիւններ կազմակերպել, փորձագէտներէն շատերը պնդեցած են՝ յաղթանակը կանխորոշուած է, յատկապէս հաշուի առնելով, որ քուէարկութիւնը պիտի անցնի արտակարգ դրութեան պայմաններու մէջ, հիմնական ընդդիմադիր ուժերու առաջնորդներն ալ կամ ազատագրուած են, կամ, 2016-ի յեղաշրջման փորձէն յետոյ, ճնշուած:

Ընդամէնը քանի մը օրէն՝ Կիրակի կայանալիք քուէարկութեան նախօրէին, սակայն, հարցումները կը փաստեն, թէ էրտողանը, որ 16 տարի անընդմէջ կը յաղթէր բոլոր ընտրութիւններուն, այս անգամ կրնայ ցանկալի արդիւնքի չհասնիլ, առնուազն՝ առաջին փուլին:

Նոյն հարցումները կը վկայեն, որ Թուրքերը հիասթափուած են յատկապէս երկրի տնտեսութեան վիճակէն: Վճռորոշ քուէարկութեանէն օրեր առաջ, նախընտրական ելոյթներէն մէկուն ընթացքին, էրտողանը պնդած էր՝ պատրաստ է հեռանալ, եթէ ժողովուրդը իրեն ըսէ՝ բաւական է («Թամամ»): Ժամեր անց ընկերային ցանցերը հեղեղուած էին այդ բառով, «Թամամի» արշաւին միայն «Թուրքեր»-ի մէջ շուրջ երկու միլիոն օգտատէր միացած է: Դիրքերը ամրապնդելու համար 64-ամեայ էրտողանը օր-օրի կ'աշխուժացնէ քարոզարշաւը: Պոլսոյ մէջ ան հուժկու հանրահաւաք իրականացուցած է ըսելով. «Արեւմուտքը ուշի ուշով կը սպասէ 24 Յունիսը, գիտէ՞ք

ինչու: Անոնք կը սպասեն, որ էրտողանը տապալի, պարտուի, բայց դուք պատրաստ էք, չէ՞, լաւ օսմանեան ապտակ հասցնելու անոնց: Մենք պէտք է շատ ջանք թափենք ասոր համար, հանգստանալ ու մէկ կողմ քաշուիլ չկայ, կ'երթանք առաջ», - ըսած է էրտողանը:

«Այս մարդը պէտք է շատոնց թոշակի երթար, ան ուղղակի ի վիճակի չէ լուծել երկրի խնդիրները», - պնդած է էրտողանի հիմնական մրցակիցը համարուող Մուհարէմ Ինճէն: Ժողովրդահանրապետական կուսակցութեան թեկնածուն, որ քննադատած է էրտողանը արդէն աւելի քան 15 տարի, վերջին շաբաթներու ընթացքին ոչ մի օր չդադրեցուց քարոզարշաւը: Ան Քիլիմէթրերով քալեց, գիւղացիներու հետ խոտ հնձեց, շարքային ընտրողներու հետ ճաշեց: Անոր կարգախօսն է՝ Թուրքոյ նոր մարդիկ պէտք են, թարմ արիւն:

Էրտողանի միւս ընդդիմախօս քրդամէտ «Ժողովուրդներու Դեմոկրատական կուսակցութեան» թեկնածու Տէմիրթաշն է, որ բանտէն իր առաջին հեռուստաուղերձը հրապարակեց:

«Էրտողանի վարչակազմը կը վախնայ ինձմէ, եւ միայն այդ պատճառով որոշած են զիս բանտ նստեցնել: Սակայն վստահ եմ, որ դուք ազատութեան կողմնակից էք, եւ ձեր օգնութեամբ մենք կրնանք երկիրը հանել այս անդունդէն: Իմ պայքարը յստակ է՝ յանուն ժողովրդավարութեան եւ ընդդէմ մենիշխանութեան ու բռնապետութեան», - իր ուղերձի մէջ նշած է Տէմիրթաշ:



MARONIAN
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

CA Insurance Lic. #0C99815



WELCOME HOME & AUTO INSURANCE
Along with all of our other *Trusted Insurance Services*

We will shop you with over 20 A-rated companies to find the best fit for your needs and budget.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE
(818) 500 9305

Հ.Բ.Ը.Մ.ի Նախագահը եւ Հայաստանի Նոր Ղեկավարութիւնը Կը Քննարկեն Համագործակցութեան Կարելիութիւնները



Յունիսի 10-ի շաբթուան ընթացքին, Հ.Բ.Ը.Մ.ի նախագահ Պերճ Սեդրակեան, Հ.Բ.Ը.Մ.ի Հայաստանի նախագահ Վազգէն Եագուպեանի եւ Կեդրոնական վարչական ժողովի անդամ Երուանդ Զօրեանի ընկերակցութեամբ, շաբթ մը այցելութիւններ կատարեց եւ աշխատանքային հանդիպումներ ունեցաւ Հ.Հ. Նախագահ Արմէն Սարգսեանի, վարչապետ Նիկոլ Փաշինեանի, Ազգային ժողովի Նախագահ Արա Բաբլոյեանի, Արտաքին Գործոց, Պաշտպանութեան, Սփիւռքի, Կրթութեան եւ Գիտութեան նախարարներու, ինչպէս նաեւ Կեդրոնական Դրամատան Նախագահին հետ: Նաեւ, Ս. Էջմիածին կատարած այցելութեանը, Պրն. Սեդրակեան հանդիպեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին հետ:

Ըստ Նախագահ Սեդրակեանի, «Ազգային ծառայութեան տարբեր ոլորտներու բարձրատեսիճան պաշտօնատարներու հետ այս հանդիպումները, առիթ ընձեռեցին աւելի խոր ըմբռնում ձեռք բերելու երկրին համար կառավարութեան նախատեսած ծրագիրներուն վերաբերեալ, բնորոշելով նաեւ հետաքրքրութեան հասարակաց գոտիներ: Այս հանդիպումները առիթ հանդիսացան նաեւ ղեկավար մարմիններուն հետ բաժնելու Հ.Բ.Ը.Մ.ի ու իրենց պատկերացումները, հիմնուած մեր կազմակերպութեան երկար տարիներու տեղական փորձառութեան եւ իրագործած բազմատեսակ ծրագիրներուն եւ տարբեր Մարզերու եւ շրջանակերու հետ ունեցած շփումներուն վրայ»: Ան հաստատեց թէ՛ «մեծապէս արդիւնաւոր այս խորհրդակցութիւնները ընթացք պիտի տան նոր նախաձեռնութեանց, կողմերու պատասխանատուութեան համապատասխան ոլորտներուն մէջ,

ընդարձակելով համագործակցութեան շրջագիծերը կրթութեան, ընկերային-տնտեսական զարգացման, մշակոյթի եւ այլ կենսական բնագավառներու մէջ»:

Ան ընդգծեց, թէ նման հանդիպումներ կ'աշխուժացնեն եւ կ'ամրապնդեն Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները, «որոնք համաշխարհային արդիւնաւորութեամբ կը հզօրացնեն Հայաստանի ինքնիշխան պետութիւնը, անոր ընձեռելով դիրքային իւրապատուկ առաւելութիւն»:

Իրենց կարգին, կառավարութեան անդամները զնահատանքով արտայայտուեցան Հայաստանի եւ Հայ ժողովուրդի բարօրութեան եւ բարելաւումին ուղղուած Հ.Բ.Ը.Մ.ի հետեւողական եւ նուիրեալ ծառայութիւններուն մասին, որոնք բաղկացուցիչները եղած են անոր առաքելութեան, նպաստելով պետականութեան հիմքերու զօրացումին:

Վեհափառին հետ իր հանդիպումին ընթացքին, Նախագահ Սեդրակեան իր զօրակցութիւնը յայտնեց ազգային արժէքներու պահպանումին ուղղութեամբ եկեղեցւոյ կատարած կարեւոր դերին կապակցութեամբ: Ան հաստատեց, թէ Հ.Բ.Ը.Մ.ը պիտի շարունակէ աջակցել եկեղեցւոյ այդ նախաձեռնութիւններուն: Ան նշեց, թէ կարեւոր է հանրութիւնը շարունակաբար իրազեկել ընկերային, կրթական եւ մարդասիրական մարզերու մէջ եկեղեցւոյ առաջ տարած լայն գործունէութեան մասին, կրկին անգամ շեշտելով իր համոզումը, թէ կառավարութիւնը եւ եկեղեցին իւրաքանչիւրը յատուկ դեր ունին կատարելիք, մեր ազգը յատկանշող իտէալները եւ անժամանցելի արժէքները ժողովուրդին մօտ արծարծուած պահելու ուղղութեամբ:

Հայաստանը Մի Կետ Է

ՊԱՆՈՒԽՏ

Չեմ լիշու՞մ այս գուարձապատումը (Չոքը), երբ եւ ինչ՞ հանգամանքում էր ստեղծուել: Բայց ես այն պատմում էի առանձին խանդավառութեամբ երբ որ յարմար միջավայր էր լինում, կարծես շոյլու՞մ էր նաեւ ազգային հպարտութիւնս:

Այսպիսին էր այն: Մի օր երկու ճարպիկ գործարարներ մէկը հրեայ միւսը՝ հայ բանավիճու՞մ են, իրենց ազգային յատկանիշների եւ աշխարհում իրենց զբաղեցրած տեղի մասին:

Հրեան ասում է հային, տես ինչ՞ երկիր ունենք, աշխարհին տիրում ենք: Բայց դուք ի՞նչ: Ձեր երկիրը այնքան փոքր է, որ քարտէզի վրայ հազիւ մի «կէտ» է երեւում:

Հայը պատասխանում է, թէ այս կէտը որ տեսնում ես քարտէզի վրայ, մեր Օֆֆիսն է, եւ ծիծաղում են երկուսով:

Հայաստանի վերջին զարգացումները հպարտօրէն կարելի է ասել շնորհիւ է շատերին, եւ խառնել է շատերի խաղաքարտերը: Թաւշեայ յեղափոխութիւնը համարակալին նորմերով, այն է սիրով եւ համերաշխութեամբ ապագան կերտելու խաղի նոր կանոններ է սահմանում:

Մարդը իր լոկ, քուէարկող օբիեկտ հանդիսացող կարգավիճակից անցում է կատարում դէպի մարդավայել մի սուբիեկտի, որը կոչու՞մ է քաղաքացի:

Ամէնուրեք քաղաքացիական հասարակութիւն կառուցելու տենդն է տարածու՞մ իւրաքանչիւրի սրտում ու հոգում, Ազգային բաղադրիչներով հանդերձ: Գնալով

աշխարհի քարտէզին հազիւ երեւացող այս, «կէտը-Օֆֆիսը» դառնում է երկիր, դառնում է փարոս, ինչպէս նաեւ սիրոյ ու համերաշխութեան, «վարակի» աղբիւր:

Ինչպիսի հրճուանք եմ ապրում, երբ լսում եւ տեսնում եմ, թէ ինչ խանդավառութեամբ մարդիկ ընդհանրապէս իսկ երիտասարդ սերունդը յատկապէս, ամէնուրեք քննարկում են, նոր կառավարութեան անելիքների եւ սպասուելիք ապագան կերտելու գործողութիւնների մասին:

Իշխանական թեւերի տարանջատման մասին:

Դատական իշխանութեան աներկբա անկախութեան մասին:

Ինչպէս Նիկոլ Փաշինեանը բազմիցս յայտարարել է, «Այլեւս Բաղրամյեան 26»-ից եւ ընդհանրապէս գործադիրից ոչ մի «զանգ» ու հրահանգ չի լինելու: Այսինքն սիրոյ եւ համերաշխութեամբ յաղթանակած յեղափոխութեան պահանջը սա է, թէ սիրելի դատաւորներ դատէք Ձեր խղճով եւ օրէնքների սահմանում Ձեզ խանգարող չի լինելու: Սակայն ցաւօք սրտի կարծես դատաւորներից շատերը դեռ «վերեւներից» եկած զանգին լսելու եւ ընթացք տալու սովորութիւնը չեն կարողանում յաղթահարել: Հարց է առաջանում նոր Հայաստանի նոր պայմաններին ազապտացուելու համար այս դատաւորներին եւ կոռուպցիոն հին համակարգին վարժուած չինովնիկներին որքան՞ ժամանակ է պէտք:

Ուստի հարկաւոր է արագօրէն ձեւաւորել եւ գործի դնել այն «մարդը», որը կը լուծի կաղաքային բազային գերիւնդիւրը:

ՀԱՅ ԵՎԵՂԵՑԻՈՅ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄ

Ուրախութեամբ կը յայտնենք մեր հաւատացեալներուն, թէ՛

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՅՈՒՆԻՍ 5-ԻՆ, 2018

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՍՆ 10:15-ԻՆ

ՅԻՍՈՒՄԻ ՊԱՅՏԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ (ՎԱՐԴԱՎԱՌ) ՏՕՆԻՆ
ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

ՊԻՏԻ ԿԱՏԱՐՈՒԻ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ, ԱՆԴԱՍԱՆ ԵՒ ՊԻՏԻ ԲԱՇԽՈՒԻ
ՍՈՒՐԲ ՀԱՂՈՂՈՒԹԻՒՆ

«ԱՐԱՐԱՏ ՏԱՆ» ՄԱՏՈՒՌԻ ՄԷՋ

Հովանաւորութեամբ Թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝
ԳԵՐՇ. Տ. ՅՈՎԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐԵԱՆԻ

եւ մասնակցութեամբ Հոգեւոր Հայրերու

ԱՆԴԱՍԱՆ ՊԻՏԻ ԿԱՏԱՐՈՒԻ ԵՒ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՂՈՒԹԻՒՆ ԲԱՇԽՈՒԻ
ՆԱԵՒ ՀԻՒՆԱՆԴԱՆՈՑԻ ԲԱՇԽՆ ՄԷՋ

EAGLE ROCK - ARARAT HOME ՄԱՍՆԱՇԵՆՔ

Նայն օրը կ-վ ժամը 3:30-ին ԱՆԴԱՍԱՆ պիտի կատարուի եւ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՂՈՒԹԻՒՆ բաշխուի նաեւ Լոս Անձելլոս - Իզլլ Ռաքի «ԱՐԱՐԱՏ ՏԱՆ» ՄԷՋ

ՊԱՍՏԻՄԱՆԱՏՈՒ՝
ԱՐՇ. Տ. ԵՐԵՄԻԱ ՔԶՆՅ. ԽԱՉԱՏԵԱՆ
ԴԻՒՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

**OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA**

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

**1060 North Allen Ave
Pasadena, CA 91104**

**Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէ՞ն հեռաձայնէ՛**
(626) 398-0506

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին**

T: (626) 797-7680 massis2@earthlink.net

ՔՍԱՆ ԱՆՄԱՐՆԵՐՈՒ ՆԱՅԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ

Նահատակութեան 103-ամեակ՝ յանուն հայ ժողովուրդին, 103 տարուան պայքար՝ յանուն արդարութեան եւ հայրենի հողի:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը եւ համայն լիբանանահայութիւնը Շաբաթ, 16 Յունիսի երեկոյեան, ոգեկոչեցին Հնչակեան 20 անմահներու նահատակութեան 103-ամեակը, Նոր Հաճնոց նախկին Սահակեանի շրջափակին մէջ կազմակերպուած հանդիսութեամբ մը: Ձեռնարկին ներկայ գտնուեցան Պէյրութի մէջ Հայաստանի հաիւպատոս Աշոտ Վարդանեանը, Հայկազեան համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտոսթեանը, Լիբանանի Հայոց թեմի առաջնորդի ներկայացուցիչ Տէր Ղեւոնդ քհնյ. Լոշիաճեանը, ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան անդամ Ընկ. Ալեքսան Գէօրգիսեանը, ՍԴՀԿ Լիբանանի շրջանի վարիչ Մարմինի ատենապետ Ընկ. Սեպուհ Գալփաքեանը, ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունին, ՌԱԿ Լիբանանի Շրջանային վարչութեան ատենապետի ներկայացուցիչ Վիգէն Թոսունեանը, Պէյրութի քաղաքապետութեան անդամ, ՀԿԲՄ-ի ատենապետ Արամ Մալեանը, ՀՄՄ Կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Միսաք Նաճարեանը, մշակութային, մարզական եւ ընկերային քոյր միութիւններու ատենապետներն ու անդամները, ինչպէս նաեւ հնչակեաններու եւ լիբանանահայերու հոծ բազմութիւն մը:

Ձեռնարկի պաշտօնական հիւրերն ու ներկաները կը հիւրընկալէին ՀՄՄի սկաուտները եւ փողերախումբի անդամները: Անոնք նաեւ հանդիսութեան սկիզբը նուագեցին Լիբանանի, Հայաստանի եւ Հնչակեան կուսակցութեան քայլերգները, ինչպէս նաեւ սգոյ երաժշտութիւնը:

Բացման խօսքով հանդէս եկաւ



Ընդհանուր տեսարան Քսան Կախաղաներու հանդիսութենէն

Ընկ. Տիգրան Միհրանեան, ան ներու ազգային գաղափարախօսութեան եւ ուխտել շարունակել եր-



Օրուայ գլխաւոր բանախօս՝ Ընկ. Ռատիկ Կարապետեան

յիշատակը ոգեկոչել կը նշանակէ Փարամազի եւ իր 19 ընկերներու խիզախ դիրքորոշումները ամրապնդել, հաւատարիմ մնալ Քսան-

թը՝ անկախ եւ ընկերվարական Հայաստանի հաստատման ուղղութեամբ: «Փարամազի եւ անոր 19 ընկերներուն յեղափոխական սկզբբունքները եւ ուղեգիծը կը մնան այժմէական, որովհետեւ այսօր եւս կառչած կը մնանք հայ ազգը զօրացնող եւ ազգային արժանապատուութիւնը բարձր պահող բոլոր առաքինութեանց: Սիրենք եւ պաշտենք մեր հայրենիքը ո՛չ թէ խօսքով, այլ՝ գործով: Թող Քսանները մեզմէ իւրաքանչիւրին համար ըլլան յուշարարներ՝ գոհուելու, նուիրուելու եւ յանձնառու մնալու ընկերվարական գաղափարախօսութեան, կերտելու համար բոլորիս երգած Հայաստանը», ըսաւ Ընկ. Միհրանեան:

Ազգային յեղափոխական երգերով հանդէս եկաւ լիբանանահայ երգիչ Յովիկ Թաֆրանեան, ընկերակցութեամբ Սեդո Պաղտասարեանի: «Կիրիկիա» զեղեցիկ պարը ներկայացուցին Նոր Սերունդ Մշակութային Միութեան «Արեգ» պարախումբի պարմանուհիները:

Օրուան պատգամը փոխանցեց ՍԴՀԿ Հայաստանի Քաղաքական Դիւանի անդամ Ընկ. Ռատիկ Կարապետեան: Ան խօսեցաւ Փարամազի մասին եւ յատկանշական համարեց անոր անցած ազգային-կուսակցական ուղին: Ան դիտել տուաւ, որ Քսաններու նահատակութիւնը կորուստ էր համայն հայութեան, ոչ միայն Հնչակեան կուսակցութեան համար: Ան յիշեցուց, որ Օսմանեան կայսրութեան մէջ 20-րդ դարու սկիզբը տեղի ունեցած յեղաշրջումէն ետք շատ մը հայ անհատներ եւ կառույցներ մեծ յոյսեր կապած էին իշխանու-

թեան հասած ուժին՝ իթթիհատին, թէեւ Հնչակեան կուսակցութիւնը բազմիցս զգուշացուցած էր իթթիհատին հաւատալու եւ անոր հետ համագործակցելու վտանգներուն մասին: «Ըլլալով սեփական անձի նկատմամբ խստապահանջ իտէալիստ, Փարամազ իր ուսերուն կրած էր պայքարի ծանր բեռը: ՍԴՀԿ մարդիկները չէին կրնար անտեսել սեփական ժողովուրդին եւ ազգային շահերը վեր դասել մարդկային շահերէն: Իթթիհատականներու՝ հնչակեանութիւնը կլանելու փորձերը ձախողեցան: Մերժուեցան իշխանութեան հետ համագործակցելու առաջարկները: Հնչակեաններու ջանքերով հայ բնակիչները կը պատրաստուէին դիմագրաւել զալիք արհաւիրքը, որովհետեւ կար ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւն», ըսաւ Ընկ. Կարապետեան: Ան յիշեցուց, որ Փարամազ պահանջած էր հայերու անկախութիւնը, որուն ճշմարտացիութիւնը հաստատուեցաւ պատմութեան կողմէ: «Այսօր մեր քոյրերն ու եղբայրները Թուրքիոյ մէջ կ'ապրին վախով, որովհետեւ այնտեղ միայն հայ ըլլալը արդէն իսկ չզրուած յանցանք է», ըսաւ Ընկ. Կարապետեան: Ան յիշեցուց, որ Փարամազի եւ ընկերներու գաղափարախօսութիւնն էր ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի հաստատումը:

«Մեր մարտիկները իրենց աչքին առջեւ ունէին Քսաններուն գոհողութիւնը: Թէեւ թուրքերուն յաջողուեցաւ սպանութիւններու միջոցաւ պայքարէն դուրս մղել արդարութեան եւ ազատութեան ջահակիրները, բայց արդարութեան կայծը քսան հազարներու սրտերուն մէջ բոցավառած էր», հաստատեց ընկերը: Ան նշեց, որ Հնչակեան կուսակցութիւնը ոչ մէկ ջանք խնայած է զօրակցելու հայրենիքի պետականութեան, ինչ որ ալ ըլլաց այնտեղ իշխող վարչակարգը: Ընկ. Կարապետեան դիտել տուաւ, որ բազմաթիւ ուժեր փորձեցին Հնչակեան կուսակցութեան անունը ջնջել պատմութեան էջերէն:

«Մեր առաքելութիւնը չէ աւարտած: Հայաստանի փոքր անկախ մասնիկը կանգնած է փոփոխութիւններու սեմին: Հնչակեան կուսակցութիւնը ողջունելով տեղի ունեցող դրական որեւէ փոփոխութիւն, պարտականութիւն ունի դրական փոփոխութիւններու նախաձեռնողը, շարժառիթը եւ մասնիկը դառնալ, առանցքային դեր ստանձնել իր գաղափարներուն համապատասխան: Պատրաստակամութիւն ունենալով համագործակցել բոլոր կառուցողական ուժերու հետ, հնչակեանութիւնը պիտի չըլլայ որեւէ ուժի լծորդ կամ կամակատար, այլ ունի եւ պիտի ունենայ սեփական անկախ քաղաքականութիւնը, ըստ այնմ պիտի առնէ նպատակային կարճաժամկէտ եւ երկարաժամկէտ համագործակցութեան քայլեր, առանց խախտելու սեփական սկզբունքները եւ գաղափարախօսութիւնը», ըսաւ Ընկ. Ռատիկ Կարապետեան:

Հանդիսութեան աւարտին ազգային-յեղափոխական երգերով բեմ բարձրացաւ լիբանանահայ երգիչ Պերճ Նազգաշեան, որմէ ետք «Ուխտի Հրաւէր» կատարեցին օրուան երկու երգիչները: Հանդիսութեան պաշտօնական բաժինէն ետք, Յովիկ Թաֆրանեան եւ Պերճ Նազգաշեան շարունակեցին ազգային-յեղափոխական երգերու փառատօնը:

ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆՆԵՐՈՒ ՆԱՅԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՈՒՐՈՒԿՈՒԱՅԻ ՄԵՋ



Շաբաթ Յունիսի 16ին Մոնթե-Լիտեօյի Հնչակեան կեդրոնի մէջ տեղի ունեցաւ հանդիսութիւն նուիրուած Քսան Կախեալներու նահատակութեան 103րդ տարելիցին:

Պետական օրհներգներէն ետք լեւի լեցուն սրահին մէջ բովանդակալից ելոյթներով հանդէս եղան Պատմաբան Փրոֆեսոր Բիչարտ Մովսէս Ազաբեան - Ուրուկոյի խորհրդարանի անդամ Խոսէ Լուիս



Սաչեան:

ՍԴՀԿ անունով ելոյթ ունեցաւ Վարիչ Մարմնի անդամ Ընկերուհի Լաուրա Ասլանեան ով շնորհակալութիւն յայտնեց բանախոսներուն եւ ներկաներուն եւ անդրադառնալով Հայաստանի մէջ տեղի ունեցող փոփոխութիւններուն ըսաւ որ Մայր Կուսակցութեան տարիներու պահանջն է որ աստիճանաբար կ'իրականացուի:

MP Manvel Grigorian Arrested on Illegal Weapons Charges and Grand Theft Armenian Parliament Strips Notorious Lawmaker of Immunity



YEREVAN (RFE/RL)—Manvel Grigorian, a retired but still influential army general, and a reputed crime figure challenging him were arrested on Saturday amid rival demonstrations held by their supporters in the Armenian town of Echmiadzin.

The town, which is home to the Mother See of Armenian Apostolic Church, has been governed by Grigorian's son Karen for almost a decade. Hundreds of local residents protested against the mayor in recent days, accusing him of corruption and mismanagement and demanding his resignation.

Speakers at the rallies there also called for an end to what they say an atmosphere of fear created by Manvel Grigorian, who has long held sway in Echmiadzin and nearby villages. They used the slogans and tactics of a recent nationwide protest movement that toppled Armenia's previous government.

Prime Minister Nikol Pashinian, who swept to power as a result of that movement, denounced this fact on Friday. "It's unacceptable that criminal elements are desecrating symbols of our revolution of love and solidarity and exploiting the revolution in mafia wars," he wrote on Facebook. "We will not allow that."

Pashinian clearly alluded to reports that the man behind the protests against the Grigorians is Artur Asatrian, an Echmiadzin native who has long been branded a crime figure by Armenian media.

On Saturday, officers of the National Security Service (NSS) raided Asatrian's Echmiadzin compound and other properties owned by the man better known as "Don Pipo." Asatrian and four other men, all of them Russian citizens, were arrested as a result.

In a written statement, the NSS said that Asatrian is suspected of illegally possessing weapons and kidnapping three individuals who had allegedly plotted to assassinate him a few

years ago.

In an apparently related development, security officers also searched the Echmiadzin villa of Manvel Grigorian. They found and confiscated large quantities of "illegally acquired" weapons and ammunition before detaining the once powerful general, according to the NSS statement.

The security service added that it immediately notified the speaker of Armenia's parliament, of which Grigorian is a member, about the arrest. It did not specify whether it will press criminal charges against the ex-general affiliated with former President Serzh Sarkisian's Republican Party (HHK).

Under Armenian law, he cannot be formally charged and kept in custody for more than three days without the parliament's consent.

Grigorian, 61, is a prominent veteran of the 1991-1994 of the war in Nagorno-Karabakh who served as Armenia's deputy defense minister from 2000-2008. He is also the chairman of the Yerkrpah Union of Karabakh war veterans, an organization which was particularly influential in the 1990s and the early 2000s.

The NSS raids and arrests came as Karen Grigorian's opponents stepped up the pressure on the Echmiadzin mayor, blocking the town's main streets in the morning. The embattled mayor organized a counterdemonstration in the town's central square later in the day. Riot police were deployed there to prevent possible clashes between the rival groups of protesters.

Karen Grigorian rejected the demands for his resignation and defended his track record when he spoke to reporters. He also offered to embark on a dialogue with his detractors.

But on Sunday he was forced to submit his resignation after the NSS released the video showing the confiscation of weapons and ammunition from his father's residences.

The National Assembly on Tuesday overwhelmingly backed a motion for stripping a lawmaker of the former ruling Republican Party of Armenia of his immunity.

The petition submitted by Prosecutor General Artur Davtyan received 77 votes "in favor" and only three votes "against". The parliament earlier also voted to satisfy a motion for initiating prosecution against Manvel Grigorian.

Prosecutor-General Artur Davtyan assured lawmakers before the votes that there is sufficient evidence to press the criminal charges against Grigorian.

The HHK initially condemned Grigorian's arrest as politically motivated and demanded his release. But it swiftly changed its stance after the National Security Service released on Sunday the extremely embarrassing video of searches conducted in the ex-general's villas.

The televised footage caused widespread shock and anger in the country. It showed NSS officers discovering large amounts of underwear, medication and field rations for soldiers provided by the Armenian Defense Ministry as well as other food donated by ordinary Armenians at a sprawling compound in Grigorian's native village, Arshaluys.

The HHK called the revelations "outrageous" and said it will not hamper the criminal proceedings. Its parliamentary leader, Vahram Baghdasarian, explained on Tuesday that the NSS video "totally changed the situation."

Artsakh President Expresses "Unconditional Support to Pashinian in Cementing Democracy in Mother Armenia"



STEPANAKERT—President of Artsakh Bako Sahakian addressed a thank-you letter to Prime Minister of Armenia Nikol Pashinian on June 18, Sahakyan's office said.

Glendale City Council Approves Artsakh Street Naming

GLENDALE - On Tuesday, June 12, 2018, the Glendale City Council, with a four to zero vote approved Unified Young Armenians' request of renaming the two blocks of Maryland Avenue into Artsakh Avenue, thereby making the Community's dream, a reality.

In a historic vote, Mayor Zareh Sinanyan, Councilman Vartan Gharpetian, Councilman Ara Najarian, and Councilman Vrej Agajanian voted in favor of approving the measure establishing Artsakh Avenue, the first and only Armenian themed street, while Councilwoman Paula Devine abstained from voting.

Hundreds of supporters, Armenian-Americans and non-Armenians, packed the Glendale City Council chambers until past midnight to first-hand witness this historic moment and to ensure that the voice of the Community is heard by their elected representatives.

"As a lifelong Glendale resident, I'm absolutely honored to have the opportunity to speak on behalf of my Armenian friends and neighbors, as well as the entire city," said Edgar Gonzalez at the City Council meeting. "The city has been enriched with the beautiful Armenian culture and changing the name of two city blocks to commemorate their heritage, I see as simply a small gesture."

This latest vote is yet another victory for the brave and independent people and Republic of Artsakh, and the Armenian-Americans as the Glendale City Council casted its vote against the backdrop of millions of dollars of Azerbaijani lobbying efforts in the US, at the federal, state, and even local levels.

"I sincerely thank you for accepting my invitation to visit Artsakh from 16 to 17 June.

Zhirayr Sefilian and Samvel Babayan Freed from Jail



YEREVAN (RFE/RL) -- Armenia's Court of Appeals on Wednesday freed Zhirayr Sefilian and six of his associates who were arrested two years ago on charges of plotting an armed revolt against the government.

The Court of Appeals refused to acquit any of the defendants. It only shortened their prison sentences and granted them parole. In particular, Sefilian's jail term was reduced from 10.5 to 5.5 years.

The court agreed to free the Lebanese-born leader of the Founding Parliament movement after 12 Armenian parliamentarians guaranteed in writing his "proper behavior" and cooperation with judicial and law-enforcement authorities. Each of the lawmakers representing the Tsarukian Bloc also had to post bail worth 500,000 drams (just over \$1,000).

Sefilian was charged with forming an armed group to attack "strategic" facilities, including a military base just outside Yerevan. He also allegedly planned to organize riots in Yerevan during the April 2015 commemorations of the centenary of the Armenian genocide in Ottoman Turkey.

Sefilian and all but one of the other defendants denied these accusations as politically motivated during their high-profile trial that ended in March. Their lawyers appealed against the resulting guilty verdicts.

Sefilian, 51, was arrested in June 2016 less than a month before three dozen members and supporters of Founding Parliament seized a police compound in Yerevan's Erebuni district to demand his release and then President Serzh Sarkisian's resignation. The gunmen laid down their weapons after a two-week standoff with security forces which left three police officers dead. They are now standing three separate trials.

On Friday, Samvel Babayan, a retired army general critical of Armenia's former leadership, was set

free more than six months after being controversially sentenced to six years in prison for illegal arms acquisition and money laundering.

The Court of Cassation, the highest body of criminal justice in the country, overturned the guilty verdict that was upheld by a lower appeals court in February and said the case must be investigated anew. In the meantime, it said, Babayan must be released from custody.

The high court also freed two other men who were tried with Babayan and sentenced to three and two years' imprisonment last November.

The court cited letters from more than a dozen Armenian parliamentarians guaranteeing that Babayan will cooperate with law-enforcement and judicial authorities if set free. Each of those lawmakers also posted bail worth 500,000 drams (just over \$1,000).

Babayan, 52, was the commander of Nagorno-Karabakh's army during and after the 1991-1994 war with Azerbaijan. He was widely regarded as the Artsakh's most powerful man at that time.

Babayan was arrested in 2000 and subsequently sentenced to 14 years in prison for allegedly masterminding a botched attempt on the life of the then Karabakh president, Arkady Ghukasian. He was set free in 2004.

Babayan criticized the authorities in Yerevan and Stepanakert after returning to Armenia in May 2016 from Russia where he lived for five years.

The once powerful general was again arrested in March 2017 after Armenia's National Security Service (NSS) claimed to have confiscated a surface-to-air rocket system smuggled to the country.

The arrest came about two weeks before Armenia's last parliamentary elections. Babayan unofficially coordinated the election campaign of the ORO alliance led by former Defense Minister Seyran Ohanian and two other opposition politicians. ORO condemned the criminal case as politically motivated.

Artsakh President Expresses

Continued from page 1

The discussions held with you and the government delegation led by you were very important and substantive.

I would also like to thank for your position articulated during our meeting that you appreciate and attach importance the readiness of the Artsakh Republic President to initiate practical and substantial changes in Artsakh and unequivocally support in this regard

Artsakh colleagues and the head of the Artsakh state, and that the government of the Republic of Armenia affirms its unconditional support of the political course we have embarked on.

I would like to emphasize that the Artsakh authorities and myself personally voice our unconditional support for your principal policy aimed at cementing democracy and the rule of law in Mother Armenia as well as restoring the full-fledged for-

Armenia Elected to the UN Economic and Social Council



NEW YORK -- On 13 June, at the elections held during the plenary meeting of the 72nd session of the United Nations General Assembly in New York, Armenia became member of the United Nations Economic and Social Council (ECOSOC) for a three-year term starting January 2019.

One of the principal organs of the UN the ECOSOC is responsible for coordinating the economic, social, environmental and related work of the specialized agencies, funds and programmes, the functional commissions and the regional commissions of

the United Nations. The ECOSOC with a membership of 54 countries serves as the central forum for discussing international economic and social issues, and for formulating policy recommendations addressed to Member States and to the United Nations.

By gaining the seat for the second time (previously served for the term 2004-2006), Armenia is renewing its commitment to support the global efforts towards sustainable development and to contribute on the national level to the works of the Council.

Former Presidents Kocharian and Sarkisian Stripped Of Gyumri Honorary Citizens Titles



GYUMRI-- Gyumri's municipal council voted on Monday to strip former Presidents Serzh Sarkisian and Robert Kocharian of the titles of honorary citizens of Armenia's second largest city.

The Gyumri municipality bestowed the title on Kocharian in 2002 when he was president of the country. It cited his contribution to the reconstruction of the city devastated by a 1988 earthquake.

The reconstruction was mainly financed by Armenian-American philanthropist Kirk Kerkorian. Hundreds of new apartments were built in Gyumri and provided to local families free of charge in the early 2000s.

Sarkisian became an honorary citizen of Gyumri in 2006. He was Armenia's defense minister at the time.

The motion to revoke Sarkisian's and Kocharian's titles was put by the Gyumri-based Gala political alliance which was in opposition to Armenia's former government. Gala said that neither ex-president deserved to receive such an honor in the first place.

The council backed the motion. Its largest faction is led by Mayor Samvel Balasanian, who has for years been allied to Sarkisian's Republican Party of Armenia (HHK).

The Gyumri council also stripped Sarkisian's brother Levon of the same title. The latter had received it as the founder of a charity that organized cultural events in the city. A local councilor representing Gala argued that participants were charged for being able to take part in those festivals.

mat of negotiations in the process of the Azerbaijani-Karabakh conflict settlement.

I am convinced that close cooperation between the two Armenian

states will be further enhanced for the glory of our Homeland and our people.

Once again accept my gratitude and warm wishes," President Sahakian said in the letter, his office said.

Taner Akçam: Turkey's Apologies for Genocide 'Not Enough' to Reinstate Historical Justice



YEREVAN (Tert.am) — Turkey's repeated statements, offering apologies to the Armenians for the 1915 Genocide, are not absolutely enough to reinstate historical justice, leading Turkish-German historian and genocide scholar Taner Akçam said in Yerevan.

At a public lecture delivered at the American University of Armenia (AUA), Akçam stressed the urgent need of serious efforts towards providing material redress.

"For me, as a scholar, apologies by Turkey are really enough," he said, referring to his extensive scholarly research devoted to the topic. "But what I propose for my government, i.e. – the government of the Republic of Turkey, is to follow Germany's example. After World War II, Germany not only acknowledged the [Jewish] Holocaust but also initiated a process with representatives of Israel and the Jewish community.

And they eventually concluded

the 1952 Luxemburg Accord, which proposed tremendous compensation," he noted.

Akçam, whom the New York Times described as the "Sherlock Holmes of Armenian Genocide" in an April 2017 review, also called for a consistently serious attention to the future fight for justice. "Justice must be reinstated. This process, involving Turkey, Armenia and the Armenian Diaspora, must be finally initiated. And it must be an open debate; agreements or disagreements are really possible... but apologies alone are not enough for re-establishing justice. What matters is material redress," the historian added.

He also admitted the impossibility of measuring the losses suffered. "It isn't just about a certain amount of money. We can never 'transport' the big civilization which the Armenians created in their historical homeland. Material [values] are not something to satisfy the Armenians," he added.

ONEArmenia's Jobs Not Mines Campaign to Hire Deminers to Clear All Mines in Area

Unexploded ordnances left behind from the Artsakh War continue to threaten locals while unemployment and poverty run high in the Republic of Artsakh.

ONEArmenia has partnered with The HALO Trust for a three-year long program that will clear all known landmines in Artsakh by 2020.

Their first fundraising campaign, Jobs Not Mines, will fund the clearance of a minefield located meters away from the 18th century Kavakavank Monastery in Artsakh's southeast Hadrut region. The HALO Trust has already cleared all other minefields surrounding the monastery, leaving the "G-15A, Mendeleneta 2B" minefield located on the northern slope of the Mengelenata Hill left.

Jobs Not Mines will train and employ two teams of 8 local deminers over the next two years, providing



them with a steady, higher-than-average income, benefits, and health insurance as they work to make the Kavakavank Monastery mine-free.

"Our mission is to create jobs so that locals have the resources they need to sustain and enhance their communities," said Patrick Sarkissian, founder of ONEArmenia.

A deminer working for The HALO Trust gets paid on average \$600 a month—about twice the average salary in Artsakh. Deminers who receive medical training from HALO, or get

Ministry of Culture and Creative Armenia Sign Strategic Partnership



YEREVAN -The Ministry of Culture of the Republic of Armenia and the arts foundation Creative Armenia today entered into a public-private partnership to rejuvenate the arts, build creative industries, incubate creative careers and projects, and develop and realize strategies toward cultural acceleration and promotion.

To that end, the arts foundation and the Ministry will develop joint strategies and programming in a number of directions -with an emphasis on cultural innovation, social impact, and the development of "creative industries" in Armenia. The memorandum, which was signed by Minister of Culture Lilit Makunts and Creative Armenia founding director Garin Hovannisian consists of 9 directions, including the following:

-The cultivation of new strategies and methodologies toward developing "creative industries" in Armenia. -The development of strategic programs that will bring Armenian talent to the global stage and marketplace.

-The acceleration of creative careers and projects by offering a toolkit of support, including funding,

business and tech advisory, production support, and marketing strategies.

Creative Armenia and the Ministry also announced that their first joint program, an innovative "accelerator" program for creative projects, is already in development.

"Why Creative Armenia? Because here are people whose track record, professional achievements, and also human values are undeniable," the Minister said. "I am certain in the success of this partnership. And we already have charted our initial strategies and plans, which go into action as of today."

"A new Armenia means also new hope and new opportunities," Hovannisian added. "We are honored to enter into a public-private partnership that will develop -and realize -the strategies of a cultural awakening."

Founded in Yerevan and Los Angeles in 2017, Creative Armenia is a global arts foundation for the Armenian people, with a founding board including Serj Tankian, Eric Esrailian, Arsinée Khanjian, Eric Bogosian, Carla Garapedian, Simon Abkarian, and Michael Aram.

promoted, get higher wages; a medic deminer can be paid up to \$640, and a team leader can get paid up to \$890 a month. In Artsakh, where 26% of the population live under the poverty line, The HALO Trust provides meaningful, well-paid jobs to 260 local people.

Local Context

During the Artsakh War of 1988-1994, Armenian and Azeri forces laid landmines and other explosive ordnance in defensive positions across what is today the Republic of Artsakh. Many still remain, and since 1995, there have been 376 civilian casualties resulting from landmines and unexploded ordnance in Artsakh, making Artsakh's landmine casualty rates one of the highest in the world. One-third of casualties have been children.

Mine Clearance As A Critical First Step for Development

The HALO Trust began working on the Mengelenata Hill in 2007 and has already cleared five minefields there through support from USAID, DFID, The Julia Burke Foundation, and the Dutch government.

Jobs Not Mines will train and deploy local demining teams over the next two years, providing them with a steady, higher-than-average income, as they work to clear the last remaining minefield near Kavakavank. With higher salaries, the deminers can afford to buy more goods and services in their own communities, recycling their earnings into the local economy of Artsakh.

Grigor Aghabavayan, who currently leads a team of deminers near the Lachin Corridor in Artsakh, is a great example of this. Grigor began working for The HALO Trust 11 years ago. Since then he's been promoted, has been able to save money from his monthly income to open his own lavash bakery, creating jobs and providing a needed service to his community.

The future of Artsakh's development depends on landmine clearance and sustainable employment. Once all landmines are gone, people will be able to put the land to use, improving transportation, communication, and infrastructure in Artsakh.

To learn more about the program, and contribute to Jobs Not Mines, visit: nearmenia.org/mine-free-artsakh



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌԱՋԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ
1918-2018

ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ

Կիրակի, Յունիս 24, 2018
Երեկոյեան ժամը 7ին

PASADENA CITY COLLEGE / SEXSON AUDITORIUM
1570 E Colorado Blvd, Pasadena, CA 91106

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝
Գագիկ Բաղալեանի
Սալբի Մայիլեանի
Յարուք Յակոբեանի
Համազգայինի «Անի» Պարախումբի
«Զուարթնոց» Պարախումբի
Համազգայինի «Սայաթ Նովա» Երգչախումբի
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

ՀՈՎԱՆԱԴՐՈՒԹԵԱՄԲ՝



ԱԶՆԻԻ ԵՒ ԲԱՐԵՐԱՐ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԸ Տ. ԳԱՌՆԻԿ ԱՒԱԳ ՔԱՅԱՆԱՅ ՀԱԼԼԱՃԵԱՆ (1928-2018)

ԶԱԿԵՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Հայ Եկեղեցին եւ մասնաւորաբար Ամերիկահայ Թեմը խորապէս կը սգայ կորուստը վաստակաւոր հոգեւորական Տ. Գառնիկ Ա. Քահանայ Հալլաճեանի որ խաղաղութեամբ վախճանեցաւ իր լիակատար 90 տարիքի լրումին, ինչպէս եղաւ իր կեանքը խաղաղ ու անվրդով, գիտակից ու պարտաճանաչ: Բացառապէս ազնուական ուղիղ եւ քաջարթուն հոգեւորականն էր Արեւելեան Թեմին մէջ, ժպիտը դէմքին, լաւատես, աշխատունակ, ձեռներեց ու մանաւանդ առատաձեռն իր բարեգործութիւններով, օրինակ հանդիսանալով իր անմիջական շրջանակի եկեղեցասէր ազգայնոց, որոնց գլուխն անցած բարերարները եղան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Սեւանի Վազգէնեան եւ Ամերիկահայ Թեմի Ս. Ներսէս Աստուածաբանական Հոգեւոր ձեռնարաններուն:

Իր անկեղծութիւնն ու հոգեւորականներու հետ մշակած անվերապահ եղբայրութիւնը իր ուղղութիւնն իսկ էր եւ բարձրութիւնը, ինչպէս ինք իր ուղիղ քալումով, ճակատաբաց իր բնորոշ ակնարկով, եւ ճշդուած խօսքերով կ'եղբայրանար հոգեւորականներու հետ: Այսքանը ըսելով կ'ուզեմ իր անխոցելի նկարագրին որոշ կէտերը վերբերել որպէս վաթսուն տարիներու իմ բարեկամն եւ գործակիցը:

Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանին դէպի ուսուցչութիւն եւ շուտով Անթիլիասի Կիլիկեան Աթոռի քահանայից երկամեայ դասընթացքներուն որպէս փայլուն ուսանող, ձայնեղ, լաւ ատենախօս, լուրջ եւ շրջահայեաց, եկաւ միանալու մեր դասերուն, ուրկէ շրջանաւարտ ըլլալէ ետք հրաւիրուեցաւ Միացեալ Նահանգներ որպէս ուսանող եւ քահանայութեան թեկնածու Թեմի Առաջնորդ Մամբրէ Արքեպիսկոպոս Գալֆայեանէ: Նիւ Եորքի General Theological Seminary ուսանելէ ետք կ'ամուսնանար համանքի սիրելի ու յարգելի Բօգի հետ ու քահանայ կը ձեռնադրուէր 1960 թուականին ձեռամբ Թեմի Առաջնորդ Սիոն Արքեպիսկոպոս Մանուկեանի, եւ Անդրանիկ սարկաւազ Հալլաճեան կը դառնար Տ. Գառնիկ քահանայ:

Հովուական իր պաշտօնները Նիւ Ճորճի եւ Նիւ Եորքի Բեթլըսընի եւ ապա Ֆէր Լոնի Սրբոց Ղեւոնդեանց, Սրբոց Նահատակաց, Եռններն Սիթիի Ս Խաչ, եւ Նիւ Եորքի Ս Խաչ եկեղեցիներէն ներս եղան բերկրալից, փայլուն եւ օրհնաբեր իր անզուգական նկարագրի համեստ եւ սակայն տոկուն եւ ինքնավստահ առաքի-նութիւններուն շնորհիւ: Զինք ճանչցողներ, հազարներով, կը միանան իմ վկայութիւններուն անվարան, քաջ գիտնալով որ Տէր Գառնիկ Աւագ Քհնյ. Հալլաճեան ժողովուրդին մօտիկ եւ հոգածու սակաւաթիւ հոգեւորականներէն մին հանդիսացաւ իր յարաբերելու ամենէն ազնիւ վարձուքին շնորհիւ, կը կրկնեմ, ժպիտը միշտ դէմքին, ուսուցանելով եւ նոյնիսկ ամենօրեայ վարժարան մը հաստատելով իր համայնքէն ներս: Երիտասարդ տարիքին Քահանայ ձեռնադրուեցաւ եւ երկու տարի ետք 1962-ին եւ եւ Միաց-

եալ Նահանգներ հասայ Յուլիս 1-ին: Յաջորդ օրն իսկ Տ. Գառնիկ նորընծայ մեր սիրելի եղբայրը առաջինը ըլլալով եկաւ առաջնորդարան դիմաւորելու իր դասակիցներէն մին, ու գիտաւանելով իր բնակարանը տարաւ ուր մնացի նոյնքան ազնիւ Երէցկիւն Հալլաճեանի հոգածութեան ներքեւ, եւ տակաւին ինծի անծանօթ յաջորդ օրուան Ամերիկայի Յուլիս 4-ի Անկախութեան Տօնի կիրակին իր մատուցած պատարագէն ետք գիտապիտի ներկայացնէր իր հօտին որոնք եկեղեցուց կալուածին վրայ տօնակատարութեան յատուկ դաշտահանդէսը սարքած էին:

Միայն իմ նկատմամբ չէր անշուշտ իր հոգածութիւնը, այլ հաւասարապէս բոլորին նկատմամբ: Յաջորդող տարիները ամրապնդեցին մեր հոգեւորականի հարազատ եղբայրութիւնը երբ յաճախ կը հրաւիրէր իր բնակարանը մնալու մի քանի օր, եւ ինձ համար բացառիկ հրճուանք մըն էր այդ: Մտաւորականի իր թաքուն արժանիքը սկիզբէն յայտնի էր, երբ կը խմբագրէր Թեմի «Հայաստանեայց Եկեղեցի» ամսագիրը, ու երբ կ'անատես կ'ըլլայի իր ընտիր եւ բացառիկ կերպով ճոխ եւ ինամեալ գրադարանին: Քանի անգամներ իմ աշխատութեան համար իմ մօտ պակասող հատորները Տէր Գառնիկ սիրով պիտի տրամադրէր եւ օր մըն ալ գրախօսականով մը պատիւ պիտի ընէր հրատարակած մէկ գիրքին մասին:

Սուրբ Էջմիածնի հանդէպ Տէր Գառնիկ անապարհ սէր եւ գուրգուրանք ցոյց տուած է իր կեանքի բովանդակ ընթացքին, աժանանալով Հայրապետական բարձրագոյն գնահատանքի, ըլլալով այն բացառիկ հոգեւորականներէն որոնք վերջին երեք Հայրապետները ընծայեցին: Յատկապէս ներկայ Նորին Սրբութիւն Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը յանակնկալ շնորհեց Տէր Հօր Ս. Գրիգոր Լուսաւորչի Ա. Կարգի բարձրագոյն շքանշանը որպէս բարերար Մայր Աթոռի, որուն ականատես վկան եղայ նաեւ ինքս, երբ յատկապէս իր հիւրն ըլլալով Հայրապետին Նիւ Եորք առաջին ժամանումին առիթով, իր գահակալութենէն մի քանի ամիս ետք: Վեհափառ Հայրապետը եկած էր հանդիպում ընենալու Տէր Գառնիկի, որուն ջերմօրէն կ'ակնարկէր որպէս «Ապունայ» (Տէր Հայր), եւ Տէր Հօր շուրջ հաւաքուած էջմիածնասէր բարերար ընկերներուն հետ: Ծաշկերոյթի ընթացքին Հայոց Հայրապետը կը պատուէր Տէր Գառնիկ Աւագ Քահանան որ անակնկալի եկած, հազիւ ոտքի կ'ելլէր իր շնորհակալութիւնը յայտնելու: Ամենայն Հայոց Կաթողիկոսը երկու օր ետք Առաջնորդարանի դահլիճին մէջ իրեն ի պատիւ տրուած հայրապետական պաշտօնական առաջին հանդիսութեան ընթացքին կը պաշտօնականացնէր նոյն պատիւը Տէր Գառնիկին ի լուր Թեմի Առաջնորդին, Թեմական Խորհուրդին եւ բոլոր հոգեւորականներուն:

Լուսահոգի Տէր Գառնիկ Աւագ Քահանան ինձ հետ ներկայութիւն մին եղաւ յիսուն տարի առաջ Ս. Վարդան Մայր Տաճարի օծման՝

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՇՆՈՐՀՔՈՎ ՄԱՐԴԻԿ - ՀՆՈՒՆԵՐԸ ԵՒ ԸՄԲՈՍՆԵՐԸ ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ Վեպ, 232 էջ

«Արաս» հրատարակչատունը կը շարունակէ գրականութեան մասնագէտներուն ու ընթերցողներու ուշադրութեան յանձնել ի դարու արեւմտահայ գրականութեան տիրական դէմքերէն Զապէլ Եսայեանի ստեղծագործութիւնները: Եսայեանի անդրանիկ՝ «Սպասման սրահին մէջ» վէպը առաջին անգամ առանձին հատորով մը տպելէ ետք, «Արաս» այժմ այլ հատորով մը կը ներկայացնէ «Շնորհքով մարդիկ» ու «Հլուները եւ ըմբօսները» վէպերը:

Առաջինը՝ «Շնորհքով մարդիկ»-ը, տպուած է Պոլիս, 1907-ին, «Սագաեան» տպարանէն, որպէս «Նշան Պապիկեան» մատենադարանի հրատարակութիւնը: Վէպը կը պատմէ անցեալին ամիրայական վերնախաւին պատկանող պոլսեցի ընտանիքի մը մութին մնացած պատմութիւնը, անոր գաղտնիքները, կը բացայայտէ ներքին փտածութիւնը: Ընդմէջ Սկիւտարի ու Բերայի ընթացող պատմը կը հիւսուի Յակոբի ու Զարուհիի շուրջ: Վէպին գլխաւոր կերպարները մարդիկ չեն միայն, այլ նաեւ Պոլսոյ գեղեցկութիւնները՝ Զամըրճան, Ոսկեղջիւրի ու Վոսփորի տեսարանները: «Շնորհքով մարդիկ» վէպը տպագրուած է նաեւ Սովետական Հայաստանի մէջ, 1959-ին:

Գիրքին մէջ տեղ գտած միւս վէպը կը կոչուի «Հլուները եւ ըմբօսները», որ առաջին անգամ կը հրատարակուի առանձին հատորի մը մէջ: Համիտեան բռնապետութեան շրջանին պոլսահայ իրականութենէն զրուած մը պատկերող կիսաւարտ այս վէպը որպէս թերթօն նախ տպագրուած է 1906-ին, Լեւոն Լարենցի խմբագրութեամբ Եգիպտոս հրատարակուող «Ազատ բեմ» հանդէսին մէջ: Զապէլ Եսայեան գործածած է Շահան ծածկանունը: Վէպէն ընդարձակ հատուած մը հետագային՝ օսմանեան սահմանադրութեան վերահռչակումի օրերուն, լոյս տեսած է նաեւ «Զայն հայրենեաց»-ին մէջ, զոր Լեւոն Լարենց սկսած էր խմբագրել Պոլսոյ մէջ:

Բացի այս վէպերէն, հատորի աւարտին գետեղուած է Փրանսահայ գրագէտ Գրիգոր Պըլտեանի «Երկու վէպեր» խորագրեալ վերջաբանը եւ բանասէր Սեւան Տէյիրմենճեանի մէկ ուսումնասիրութիւնը, ուր ցոյց կը տրուին «Շնորհքով մարդիկ» վէպի պոլսական ու սովետական հրատարակութիւններուն տարբերութիւնները:

Զապէլ Եսայեանի նոր հատորը, որու կողքին գործածուած է Կարապետ Եսայեանի մէկ գեղանկարը, հասցեագրուած է դպրոցական բարձր տարիքի պատանիներուն, ինչպէս նաեւ ընթերցող լայն շրջանակներու համար

ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ
Բուն անունով Զապէլ Յովհաննէսեան, ծնած է 1878-ին Սկիւտար: Նախակրթութիւնը ստացած



ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ
Շնորհքով Մարդիկ
Հլուները եւ Ըմբօսները

է ծննդավայրի Ս. Խաչ վարժարանին մէջ: Տասնօթ տարեկանին գացած է Փարիզ եւ հետեւած Սորպոնի գրականութեան դասընթացքին: Հոն ամուսնացած է նկարիչ Տիգրան Եսայեանի հետ: Գրական իր նախափորձերը կատարած է Արշակ Զօպանեանի «Ծաղիկ» եւ «Անահիտ» թերթերուն մէջ: Փրկուած է Մեծ Եղեռնէն, փախչելով Պուլկարիա եւ անկէ անցնելով



Կովկաս, ուր տարած է հանրային եւ ազգային կեանքը շահագրգռող աշխատանք: 1920-էն ետք անցած է Եւրոպա: Ազգային գործունէութեան առընթեր գրողած է նաեւ գաղթականներու եւ որբերու տեղաւորման հարցերով: 1927-ին կ'այցելէ Խորհրդային Հայաստան եւ Փարիզ վերադարձին կը հրատարակէ «Պրոմէթէոս ազատագրուած» հատորը:

1933-ին կը տեղափոխուի Երեւան եւ հոն կը շարունակէ իր գրական գործունէութիւնը: Կը պաշտօնավարէ պետական համալսարանի մէջ, որպէս դասախօս, աւանդելով արեւմտեան երկիրներու գրականութեան պատմութիւն: 1937-ին կը դառնայ Սթանիլեան բռնութիւններու զոհ. կ'աքսորուի: Հետագային կը յայտարարուի, որ մահացած է 1943-ին:

Զօրացիկ ֕ժանդակեկ ֓րկեկ
SYRIAN ARMENIAN RELIEF FUND
www.syrianarmenianreliefund.org
Syrian Armenian Relief Fund
P.O. Box 1948
Glendale, CA 91209-1948

Creative Armenia-ն և ՀՀ Մշակույթի Նախարարությունը Ստորագրեցին Համագործակցութեան Յուշագիր



Մշակութային զարգացումը և «ստեղծարար արդիւնաբերութիւնը» ուշադրութեան կեդրոնում են

ՀՀ Մշակույթի նախարարութիւնը և Creative Armenia մշակութային հիմնադրամի ստորագրեցին մասնաւոր-պետական համագործակցութեան յուշագիր, որի նպատակն է արուեստների վերակենդանացումը, «ստեղծարար արդիւնաբերութեան» (creative industries) կայացումը, ստեղծարար աշխատանքների ու նախագծերի զարգացումը և մշակութային զարգացման ու խթանման ուղղութեամբ մարտավարութիւնների մշակումն ու իրականացումը:

Այդ նպատակով հիմնադրամի ու նախարարութիւնը կը մշակեն համատեղ ռազմավարութիւն և ծրագրեր մի շարք ուղղութիւններով՝ դիտակէտում ունենալով մշակութային նորարարութիւնը, սոցիալական ազդեցութիւնը և «ստեղծարար արդիւնաբերութեան» զարգացումը Հայաստանում: Մշակույթի նախարար Լիլիթ Մակունցի և Creative Armenia-ի հիմնադիր տնօրէն Կարին Յովհաննիսեանի կողմից ստորագրուած յուշագիրը բաղկացած է 9 ուղղութիւններից, որոնցից են՝

-Հայաստանում «ստեղծարար արդիւնաբերութեան» զարգացման ուղղութեամբ նոր ռազմավարութիւնների և մեթոդների մշակումը, -ստրատեգիական ծրագրերի զարգացումը, ինչը հայ տաղանդաւոր արուեստագետներին համաշխարհային թատերաբեմ և միջազգային շուկա դուրս կը բերի, -ստեղծարար կարիերաների և նախագծերի զարգացումը՝ առաջարկելով աջակցութեան գործիքակազմ, որը ներառում է ֆինանսաւորում, բիզնես և տեխնոլոգիական խորհրդատվութիւն, արտադրական աջակցութիւն և մարքեթինգային ռազմավարութիւն:

րական աջակցութիւն և մարքեթինգային ռազմավարութիւն:

Creative Armenia-ն և նախարարութիւնը նաեւ յայտարարեցին, որ իրենց առաջին համատեղ ծրագիրը՝ ուղղուած ստեղծարար նախագծերի իրականացմանը, արդէն զարգացման փուլում է:

«Ինչու հենց Creative Armenia-ն: Որովհետեւ այստեղ ներգրաւուած են մարդիկ, ում աշխատանքային փորձն ու պրոֆեսիոնալիզմը և մարդկային որակները հաւաստում են, որ չենք ձախողելու», - ասաց նախարարը: «Վստահ եմ, որ համագործակցութիւնը հաջող է լինելու: Մենք արդէն գծել ենք այն շրջանակը, որի շուրջ պէտք է սկսենք աշխատել հենց այսօրուանից», - յաւելեց նա:

«Նոր Հայաստանը նշանակում է նաեւ նոր յոյս ու նոր հնարաւորութիւններ», - ակելացրեց Յովհաննիսեանը: «Այսօր սկսում ենք մասնաւոր-պետական մեր համագործակցութիւնը, որը թոյլ կը տայ նորացնելու ու զարգացնելու հայկական մշակույթը ու տրամադրելու արուեստագետներին ու նրանց ստեղծագործութիւններին իրականում ռազմավարական ու համապարփակ աջակցութիւն»:

2017թ.-ին Երեւանում և Լոս Անճելոսում հիմնադրված Creative Armenia-ն մշակութային հիմնադրամ է, որի հիմնադիր խորհրդի անդամներն են Սերժ Թանգեանը, Էրիկ Էսրաիլեանը, Արսինէ Խանջեանը, Էրիկ Պօլոսեանը, Կառլա Կարապետեանը, Սիմոն Աբգարեանը և Մայքլ Արամը: Creative Armenia-ի ծրագրերին ծանօթանալու համար այցելէք creativearmenia.org կայքէջը:

Դանիացի Թաւջութակահար Ծոնաթան Սուլեյման «Արամ Խաչատրեան» 14-րդ Միջազգային Մրցոյթի Յաղթող



Յունիս 14-ին Արամ Խաչատրեան համերգասրահի մէջ տեղի ունեցած է «Արամ Խաչատրեան» 14-րդ միջազգային մրցոյթի փակման հանդիսաւոր արարողութիւնը, որու ընթացքին հրապարակուած են մրցոյթի յաղթողներու անունները:

Այս տարի Արամ Խաչատրեանի ծննդեան 115-ամեակի օրը՝ Յունիս 6-ին մեկնարկած մրցոյթին մասնակցած էին միայն թաւջութակահարները: Մրցութային երեք փուլերու աւարտէն յետոյ յաղթող ճանչցուած է և 15 հազար տոլարի համարժէք դրամական պարգևի արժանացած է դանիացի թաւջութակահար ճոնաթան Սուլեյմանը: Երկրորդ տեղը զբաղած է 10 հազար տոլարի համարժէք դրամական պարգևի արժանացած է Ռուսիան ներկայացնող թաւջութակահար Ֆեոտոր Ամոսովը: Երրորդ մրցանակը, համապատասխանաբար 5000 տոլարի համարժէք դրամական պարգևով, յատկացուած է Ռուսիան և Քորիայի հանրապետութիւնը ներկայացնող թաւջութակահարներ Ռուստէմ Խամիտովին և Ջի-Ուոն Հոնկին:

Ի դէպ, Ջի-Ուոն Հոնկին արժանացած է նաեւ «Հանդիսատեսի համակրանք» մրցանակին: Մրցոյթի աւարտին, աւանդաբար, բացի հիմնական մրցանակներէն, յանձնուած են նաեւ յատուկ մրցանակներ:

Այս տարի մրցոյթի միջազգային ժիւրիի պատուաւոր նախագահը աշխարհահռչակ լեհ երգահան Քշիշտոֆ Պենդեքիւն էր:

ADLP - WESTERN DISTRICT COMMITTEE AND ORGANIZATION OF ISTANBUL ARMENIANS INVITE YOU TO ATTEND

A LECTURE SERIES PRESENTATION ON CURRENT GEOPOLITICAL PERSPECTIVES OF MODERN TURKEY

KEYNOTE SPEAKERS

PANOS TITIZIAN
Pharmacist, Political Analyst

“TURKISH FOREIGN POLICY AND THE CHALLENGES OF THE COUNTRY DURING THE AKP PARTY”

EDVIN MINASSIAN
Esq., Chairman of OIA Board of Trustees

“POLICY TOWARDS ARMENIANS BY VARYING ADMINISTRATIONS IN TURKEY SINCE 1923 - CONSTANTS AND VARIABLES”

DR. SINAN BIRDAL
School of Int. Relations and Middle Eastern Studies
UCLA

“ANALYSIS OF THE UPCOMING PRESIDENTIAL AND PARLIAMENTARY ELECTIONS IN TURKEY”

A ROUND TABLE DISCUSSION

Date: Friday, June 22nd, 2018, at 7:30 pm
GLENDALE CENTRAL LIBRARY
 Address: 222 East Harvard Str., Glendale, CA 91205
 Refreshments after the event
 Admission is free

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՅ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԳՍԱՍՐ)

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԳՍԱՍՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՄԱՆՐԱՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝

ԴԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՀՐԵՂԵՆ ՓԱՌՔԻ ԼՈՅՍ ՅԱՅՐԵՐԻՆ



ՊՕՂՈՍ ԱՐՍԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Միջօրէ, արեւ աստուած Միհրը, երկիր մոլորակի իր ընթացքին մի ակնթարթ թող կանգնի երկնակամարի բարձունքին, հեղեղային լոյսի գուարթութեամբ ժպտայ, իր աստուղանից յառնած կրակ ճառագայթները որպէս հրավառութիւն խուրձ-խուրձ ցած նետի՝ ողջոյնելու մոլորակի հայրերին: Արեւ, արմէնները նրա վառուող կրակին, լոյսին պաշտամունք նուիրեցին, որ իրենց լեռների աշխարհին յաւերժութիւն պարգեւէր, իրենց արտերի ցորեանին լոյս շողէր, իրենց այգիներին պտղաբերութեան ծիածան փռէր, իրենց հողիներին կեանքի հէքիաթ հոսէր: Միհր կոչեցին նրան, իրենց մեհաններ բերին, որոնց ճակատներին յաւերժութեան խորհրդանիշ կարմիր բոցոտ նուէր, նրա կրակով հրդեհուած խաղողի ողկոյցներ քանդակեցին, նրանց շուրջ բոլորը արեւի կրակով բոցավառուող սուննիներ տնկեցին: Նրա ճառագայթների փունջերից կրակ վառեցին իրենց աստուղաններում, Արմա-Արմէն՝ արեւ աստուծոյ որդիները, կոչեցին իրենց: Եթէ մայրերի օրուան ձօնուած տօնախմբութեանը նրանց լանջերը տիեզերքից քաղած աստղերի փունջերով քօղեցին, թնդանթների որոտների համազարկերով ողջոյնեն հայրերին, սրտերի գուարթ լոյսով տօնախմբեն նրանց փառաբանման օրը: Ամերիկայի Միացեալ Նահանգները ցնծում են այսօր, թող ցնծայ աշխարհն այսօր, կայծոտ ժպիտների համբոյրներ հայրերի խոհուն ճակատներին, երախտագիտութեան տեղատարափ անձրեւ, երջանիկ օրերի մաղթանքի աղօթք նրանց յախուռն զարկերով սրտերին:

Տարին էր 1909, Ամերիկոսի Սոնորա Սմարթ Տոտը քաղաքի տաճարում ունկնդրել էր մայրերի օրուայ տօնակատարութեանը նուիրուած վարդապետի ողջոյնի քարոզը: Թախծոտ աղօթել էր, որ յաւերժութեան ճանապարհով քայլող մայրիկի հոգուն Արարիչը լոյս շողար: Մայրիկի կորստեան ցաւի մշուշն էր պատել հոգին, մայրական գգունք էր ծորել սրտին, մայրական տիեզերական սիրոյ շողեր չէին իջել դէմքին, չէր հպել մօր լանջին, որ նրա սրտի տրոփիւնի գարկերը մայրութեան սիրոյ լոյս յորդէր հոգու տաճարին: Եւ մայրը, իրեն կեանքի արեւի լոյսի շողեր պարգեւելու պահին... իր լոյսն էր հանգէ: Տաճարում հնչած աղօթքների մրմունջները, մայրերին ձօնուած անանձնական սիրոյ ողջոյնները՝ պլպլացող մօմերի լոյսին յենած, գնում գգուելու յաւերժութեան ճամբաներով քայլող մայրերին: Սոնորան ընկողմանել էր մայրական վշտի անուրջները յորձանուտ, խորհրդածել... ինչու՞ նաեւ հայրերին

երջանիկ մաղթանքների, խոնջանքի երախտիքի, նրանց արարման պաթոսին խրախճանքի հանդէսների տօնախմբութիւն չլինէր, նրանց աւելնով ուռճացած գաւակները իրենց հողիներէ քաղած սիրոյ երախտիքի փունջերը չմատուցէին: Սոնորան եւ իր հինգ քոյր ու եղբայրները, Վիլեամ ձէքսոն Սմարթ հայրիկի խնամքին էին մնացել: Կեանքի վայելքները գոհաբերած՝ բարեպաշտ, քրիստոնէական սիրով յորդած հայրը, աւելի քան երկու տասնամեակներ խնամել էր իր վեց գաւակներին, մայրական սիրոյ հուր կաթել նրանց սրտերին:

1910 թուականի Յունիսի 19-ին՝ հայրիկի ծննդեան օրը, Սոնորան, Ուաշինգթոն նահանգի Սպակէյն քաղաքում, տօնախմբութիւն էր կազմակերպել՝ իր եւ բոլոր հայրերի մեծարման համար: Աստուածային երախտագիտութեամբ յորդած աղջիկ, քու անունն էլ փառաբանում է հայրերի մեծարման օրուայ հետ: Եւ դու, հայրական քնքուշ սիրոյ կրակի ջահը ձեռքիդ քայլում ես ծաղիկների ու աստղերի լոյսով վարար քու յաւերժութեան ճանապարհին, հայրերի հողիները քեզ գրկած տանում իրենց տիեզերական ճախրանքի հետ:

Եւ ամէն տարի, Արարիչի հանգստեան այդ Կիրակի օրը, երկրում սկսել էին հայրերի մեծարանքի ոչ պաշտօնական տօնախմբութիւններ, նրանց պատուին սիրոյ հրավառութիւններ կատարել, նրանց արի սրտերը ցնծութեան լոյսով հեղեղել: 1924 թուական, երկրի նախագահ՝ Կալվին Կուլիջը, ամէն տարուայ Յունիս ամսուայ երրորդ Կիրակի օրը հռչակել էր՝ «Հայրերի Օր»: Օրուայ ծաղիկը ընտրել է՝ Աստղիկ դիցուհու արիւնից շառագունած ծաղիկների գեղուհի՝ վարդը, որի վրայ յենած սոխակները տիեզերքի ողջոյնն են հնչում աշխարհին: Կարմիր վարդերը՝ կեանքի հէքիաթի վայելքով հրճուող հայրերին, սպիտակները նրանց շիրիմներին՝ որպէս լուսնեակից քաղած ձիւնալոյս պսակ:

Տիեզերքի Արարիչին «Հայր Մեր» ենք կանչում: «Հայր Մեր» տէրունական աղօթքը մրմունջում ենք վերացած ու լուռ երկիրդածութեամբ: Խաղաղութեան անդորր է իջնում մեր հողիներին, չարից փրկուելու աղերսանք, մեր անուշ մանչերին հանապազօրեայ հաց պարգեւելու յոյսի ըղձանք, հայրենի երկրին խաղաղութիւն: Հայրը հացի արարողն է, մեր ունչպար հայրերն են ցորեանի հատիկները թեւատարած շող տուել արտերի հողին, հողովէլներ կանչելով եզներին եղբայր դարձրել, արօրների արեւաշող խոփերով հողի կուրծքը պատուելով ծածկել այն, որոնց մահով արտերն են կանաչ հագել, արտերն են ոսկեփայլ ծփացել, արեւահուր հասկերը գեփիւռին յե-

նա՞ծ պար բռնել, ամբարները յորդել հացով: Հայոց հեթանոս աստուածների տիեզերական ոգու խորհուրդի կրակը հոգում՝ բանաստեղծ Վարուժանը, հացի արարման աղօթքն է երկնել:

Հայաստան երկիրը Հայր-ենիք ենք կոչել, մեր նախնիների արեամբ, քրտինքով, խոնջենքով, քաջերին վայել մարտիկների արիւնով ողողուած հողը՝ հայրենի հող անուանել, որը Արշակների սրտերին պայքարի, կուռի շանթեր է փոթորկել: Հայրենի հողում, հայրերը շէներ, ոստաններ են արարել յետնորդների համար, այդ նրանք են դիւցածնօրէն կուռել նրանց պաշտպանութեան համար: Երբ հայրենիք ենք կանչում, սարսուռ են հողիները մեր, հայրենիք մրմունջալով՝ ժպտում են մեր սրտերը, կորցրած երկրի կարօտի յուշերից փլոււմ են մեր հողիները, նրա խուռիքից մեր ակներից արցունքի մարգարտաշար հատիկներն են համբուրում մեր այտերը: Հայրենիքի համար իրենց զարնանային կեանքի երազներն են գոհել բազումբազում գաւակներ, իրենց արի ցեղի արեամբ սրբացրել հողն հայրենի: Արմենակ արի հայրս, հայրենիք կանչելով գաւակներին բերել հայրենի երկրի Չանգեգուր աշխարհի լեռներ:

Հայրերի արարած օճախները հայրական տուն ենք կոչել, ուր գնացինք նրա կարօտի մրմունջները տարինք մեզ հետ: Իմ, ձեր ծննդավայրերի հայրենի տնէ՞րը, մեր հողիների տաճարներն են: Ամէն օր այցի եմ գնում նրան, նրա պատշգամբում հայրենի հողի կուռից վերադարձած հայրիկիս եմ գրկել, մայրիկիս ջերմ համբոյրն է ճակատիս: Խոռովում է հողիս, կարօտի սարսուռի անուշ հոփիկներն հետ հայրենի լեռներին անուշ հովիկներին բազմած, գնում ընկողմանում նրանց գիրկը: Հայրը ինքը տունն է, իր վսեմ ճակատի վրայ է պահում այն, որ չփլի, շարունակի ապաստան լինել գաւակներին:

Սահակ Բագրատունի իմաստուն Մեծ իշխան, իր արիական ազգի պատմութիւնը երկնելու համար աղերսել էր Մաշտոցի աշակերտ Խորենացուն, իր տոհմին ու ցեղին յաւերժացնելու համար Մատեան երկնէր: Եւ Խորենացի իմաստուն այրը իր ցեղի արարումներին որոնելու ելաւ, Արմէն-հայրի մտքի թռիչքներով աւանդուած պատմութիւնից ճշմարիտը ու իրականը պեղեց, իր ազգի բազմինն՝ «Հայոց Պատմութիւն» մատեանը ձօնեց, որից բռնկած ջահերը արիական հուր են կաթում մեր հողիներին: Հայոց Միւնիստր Բակուր Նահապետի Գողթն աշխարհի բանաստեղծների տաղերը ճառագեցին մեր սրտերին, հուր-հերով ու արեգակունք-ակներով վահագնի ծնունդի հրաշապատումը աւետեց, նախնեաց մեծ գործերի հպարտանքը ու նրա վսեմութեան պատգամ փայլատակեց մեր սրտերին: Եւ նրան «Պատմահայր» կոչեցինք:

Սպիտակ թղթին հակած, մտքիս ղողանջում է թոռնիկներիս կանչերի արձագանքը, երբ նրանք բակում խաղալիս ինչպէ՞ս էին «Մեծ Հայրիկ» կանչում եւ գիտէ՞ք այն ինչքան անուշ էր հնչում: Նրանց խաղրնկերները զարմացած նայում ինչո՞ւ էին պապիկին «Մեծ Հայրիկ» կանչում: Եւ «հայրիկներ» սիրոյ ջերմութեամբ լեցուն այդ մանչերն էլ, ինձ հանդիպելու ատեն զուարթ ձայնով «Մեծ Հայրիկ» կանչել:

Տիեզերական բարութեան ջա-

հը ձեռքին երկիր մոլորակ ժամանած բարի հսկան՝ Սարոյեանը, ասել էր, որ բոլոր հայերը բանաստեղծ են: Ճշմարիտ էր այդ իմաստունը, իսկապէս հայոց դպրութեան, արուեստների, բանաստեղծների հովանաւոր՝ Տիր աստուածը, ինչքա՞նք քերթողներ, գուսաններ էր պարգեւել Արմէն-Հայ արի ցեղին: Գուսաններ՝ Սայեաթ, Ջիւանի, Շերամ, Հաւասի, Աշոտ, Շահեն, Դոստի իրենց երգերով փառաբանել են հայրերին, պատգամել՝ գաւակներին հովանի լինելու համար երկնից քաղած սպիտակ ամպերով քօղել նրանց: Յեղին սրտի ջահը ձեռքին՝ «Վահագն Յարգագողի ճանապարհ»-ի հայոց հեթանոս աստուածների տաճարից հայրենի երկիր եկած Վարուժանը, աղաչել էր հայրիկին՝ իր ձիւնոտ վարսերի խորհուրդով, մտքի անդաստանից յորդած աղօթքով օրհնէր իրեն:

Յայր իմ, օրհնէ, ժամը հասաւ, պիտ երթամ,

Նոր կեանք մ'իճծի կը սպասէ: Պատանութիւնն ես թողեցի, նոր արիւն

Երակիս մէջ կը վազէ: Իմ արիւնս է գոյացած քու քրտինքդ:

Յոգնութեանդ ծիլն եմ տխուր: Յոգիդ, կաղնի, երբ կործնուտար մորիկից՝

Ես շուքիմ տակ, հանգիստ, լուռ: Յայր իմ, օրհնէ, դողող ձեռքերդ զլխուս դիր,

Թող մատներդ կաթի վար Աղօթքդ՝ եկած հոգուդ պայծառ խորանցն:

Վերջին ժամն է, օրհնէ հայր:

Հայ իմաստուն մի այր, իր մայրիկին աշխարհներ տարաւ՝ «Մայրիկ» շարժանկարով: Տեսէ՞լ էք արդեօք, Հայ մի ուրիշ իմաստունի՞՝ «Հայրիկ» շարժանկարը: Պատանի վրայ պարթեւահասակ խոշոր Մհեր-Ֆրունզիկ «Հայրիկ»-ն է յաղթ քայլում եւ հեռու բազմութեան մէջէն իր մանչն է վազում, «Հայրիկ» կանչելով գիրկն ընկում: Ինչքա՞ն անհամբեր սպասել ենք հայրական տան սեմին, վազել հայրիկին ընդառաջ, խոնջած հայրը սիրոյ թովչանքի քրքիչով գրկել, սեղմել է մեզ իր լանջին: Չէ, մեր հայրերը մեր ցեղի ոգին են:

Մեր լեռները կոչեցինք՝ «Լեռներ Հայրենի»: Բարձր են լեռները մեր երկրի, սպիտակ թագեր են նրանց գագաթներին, ամպերի ձերմակ շապիկներ են հագել: Գիշերները աստղերն են այցի գալիս նրանց, լուսնեակն է իջնում իր սպիտակ համբոյրը շողելու ճակատներին, արեւն իր երթը աւարտելուց առաջ կարմիր պատմուճան փռում նրանց երեսներին, երկնքում պայթած շանթերը կրակէ գօտի կապում մէջքերնին, նրանց սրտերից կրակ է ժայթքում:

Ո՞վ Արմէն-Հայ մարդ, որ արեւի լոյսի ու կեանքի հէքիաթն ես ըմբոշխնում, իմացի՞ր, այն քեզ պարգեւել է հայրդ, խոնարհիւր նրա սպիտակ թագին, նրա կեանքի իմաստութեանը եւ դու Քրիստոնեայ հայ, կատարիւր պատուիրանը քու պաշտած Աստուծոյ՝

ՅԱՐԳԻՐ ՈՒ ՊԱՏՈՒԻՐ ԾՆՈՂՔԻ

ՊԱՏՈՒԻՔ ՔՈՒ ՀԱՅՐԴ ՈՒ ՄԱՅՐԻ, ՈՐՊԵՍՁԻ ՔՈՒ ՕՐԵՐԴ ԵՐԿԱՅՆ ԸԼԼԱՆ ԱՅՆ ԵՐԿԻՐԻՆ ՎՐԱՅ ՈՐ ՔՈՒ ՏԵՐ ԱՍՏՈՒԱԾՏ ԿՈՒՏԱՅ ՔԵՁԻ՝ (Ելից 20-12)

Եւ ամենաթանկագին օրինակը, որ հայրը կարող էր տալ իր գաւակներին, նրանց մայրերին շնորհած իր սիրոյ գուրգուրանք է:

ՁԵՐ ԲՆԱԴՈՐՈՒԹԻՒՆԸ ԸՍՏ ՆԱԽՆՏՆՏՐԱԾ ԳՈՅՆԻ

Մեւ: Դուք ունիք շրջապատի հոգատարութեան կարիքը, եթէ նոյնիսկ չէք խոստովանիր այդ մասին: Միայնութեան զգացողութիւնը երբեմն կը համակէ ձեզ, բայց դուք ուժ կը գտնէք մէկ կողմ նետելու այդ մտքերը: Հնարաւոր է՝ պարզապէս կ'ուզէք միմիայն մնալ, որպէսզի ոչ մէկ օտար բան խանգարէ ձեզ: Դուք ունիք ձեր սեփական կարծիքը, եւ եթէ նոյնիսկ անիկա կը տարբերի ուրիշներու կարծիքէն, ատիկա չի խանգարեր մնալու ձեր կարծիքին վրայ:

Մոխրագոյն: Դուք խոհեմ էք, հապշտապ քայլերու չէք ձեռնարկեր: Հարկ չէք համարեր բոլորը տեղեակ պահել ձեր մտքերուն, զգացմունքներուն մասին, ձեր ներաշխարհը փակի տակ կը պահէք եւ միայն ընտրեալներուն կ'արտօնէք մտաւոր գործել այնտեղ: Դուք կը նախընտրէք ուշադրութիւն չգրաւել, կարեւոր ամէն ինչ պահուած է ձեր մէջ:

Կարմիր: Դուք ունիք զգայուն եւ արտայայտիչ էութիւն: Երբեմն կրնաք ազատութիւն տալ ձեր զգացմունքներուն՝ չմտածելով, որ ատիկա ինչպէս կ'ընկալեն շրջապատի մարդիկ: Դուք կրնաք բորբոքիլ, բայց ձեր գործողութիւններուն մէջ չարութիւն չկայ, քանի որ դուք լի էք կենսաբաշխութեամբ եւ կ'ուզէք ապրիլ հիմա եւ այստեղ: Դուք մեծ ներքին մղում ունիք: Երբեմն ձեզի կը թուի, որ յոգնած էք, հասած էք սահմանագիծին, բայց իրականութեան մէջ դեռ շատ բան կրնաք ընել:

Սրճագոյն: Դուք ամուր կանգնած էք ձեր ոտքերուն վրայ, իրական կեանքը ձեզի համար ամենակարեւորն է: Ինչու՞ երկնային ամբողջներ կառուցել, երբ պարզ բնագ-

դային, ուրախութեան զգացմունքներուն հանդէպ «իրական» հակում կայ: Կը նախընտրէք ինքնուրոյն որոշումներ կայացնել:

Դեղին: Մարդոց հետ անբռնազբօսիկ յարաբերութիւններ ունիք: Շփուող էք, հետաքրքրասէր, հաճոյք կը ստանաք մարդոց հաճելի թուալու եւ զանոնք զրաւելու հնարաւորութենէն: Էութեամբ լաւատես էք եւ իւրաքանչիւր իրավիճակէ բարեյա ջող ելք կ'ակընկալէք, եթէ նոյնիսկ դուք ալ այդ մասին չէք մտա ծեր: Ձեր հետ դիւրին է ընդհանուր լեզու գտնելը եւ հաճելի է շփուիլը:

Կապոյտ: Դուք ունիք հանգիստ բնավորութիւն, զգացումներու պոթիկումը հազուադէպ երեւոյթ է: Վստահութեան զգացողութիւնը ձեզի համար ամենակարեւորն է, ատիկա կը վերաբերի ընտանիքին, գործերուն եւ կեանքին ընդհանրապէս: Յաճախ կը յոգնիք եւ հանգիստի կարիք կ'ունենաք: Ներդաշնակութեան, հանգիստի ձգտումը ձեզի համար իմաստ ունի: Հարուստ ներաշխարհ ունիք եւ, հաւանաբար, բազմաթիւ տաղանդներ:

Կանաչ: Դուք կը վախնաք ուրիշներուն ազդեցութենէն, կը փնտռէք ինքնահաստատման միջոցներ, քանի որ ատիկա ձեզի համար կենսական նշանակութիւն ունի: Դուք ունիք հսկայական կենսական ներուժ: Ունակ էք շատ բանի, երբ մանաւանդ կը զգաք վստահութիւն եւ, ամենակարեւորը, շրջապատի աջակցութիւնը: Դուք հիմնաւոր կը մօտենաք բոլոր նախաձեռնութիւններուն եւ կրնաք դիւրութեամբ յաղթահարել դժուարութիւնները, եթէ ձեր կողքին կայ յուսալի մէկը:

ԵՐԵՒՅԹՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԻՆԵՐԸ Կ'ԱՎՆԿԱԼԵՆ ՏՂՈՑՄԷ

1) Կանայք կը փափաքին իրենց կողքին տեսնել բարետես, բարեկազմ, մկանուտ եւ ուժեղ տղամարդ:

2) Տղամարդը պէտք է հաճելի բուրէ: Ան կրնայ տարբեր անուշահոտեր օգտագործել, բայց կարեւորը հաճելի բոյր ունենայ:

3) Կանայք չեն սիրեր, որ տղամարդիկ զարդեր կրեն: Կարելի է բարակ վզնոց կրել, բայց ամէն ինչ պէտք է չափի մէջ ըլլայ:

4) Տղամարդը նոյնպէս ցանկալի է, որ միշտ ժպտայ: Անոր ատամները պէտք է միշտ առողջ ու ճերմակ ըլլան: Ասիկա կը յուշէ

տղամարդու առողջ եւ զրաւիչ ըլլալուն մասին:

5) Կանայք չեն սիրեր, որ տղամարդիկ պայուսակ կրեն:

6) Գեղեցիկ կեցուածք եւ քայլուածք: Տղամարդու քայլուածքը պէտք է հաստատուն, վստահ ու թեթեւ ըլլայ: Կա նայք նոյնպէս մեծ ուշադրութիւն կը դարձնեն այս երկու հանգամանքներուն:

7) ՁԺխել եւ ծամոն չծամել: Շատ տհաճ է նայիլ ծամոն ծամող տղամարդու: Կանայք չեն ուզեր նաեւ իրենց կողքին տեսնել մշտապէս հայհոյող տղամարդ:

ԻՆՉ ԱՐԺԷ ՍՈՐԿԻԼ ԻՏԱԼԱՑԻՆԵՐԵՆ

Իտալացիները վարպետ են շատ արուեստներու մէջ. գեղեցիկ կեանքի, յարմարութիւն եւ որեւէ բանի տակէն պատուով դուրս գալու, պահճ ապրելու եւ անով հիանալու արուեստներուն մէջ անոնք չունին իրենց հաւասարը: Հասկնալի է, որ ամէն ինչ չես կրնար տեղաչնացնել, սակայն իտալացիներուն վերաբերմունքը շատ բաներու նկատմամբ ա՛յն է, որ հասարակ իտալացիի կեանքը կը վերածէ ցանկալի Dolce Vita-ին:

Կերակուրը հաճոյք է, իսկ անունը ընդունիլը՝ ծէս...: Իտալացիները կ'ապրին օրուան հասարակարգով: Անհաւատալի կը թուի, բայց այդպէս է: Միայն թէ ատիկա առանձնապատուկ հասարակարգ է. առաւօտեան՝ սուրճ խմորեղէնով, կէսօրուան ճաշ՝ ընտանիքի հետ, նախընթրիք՝ ժամը 17:00-19:30, ընթրիք՝ 20:00-21:00 տունը կամ ճաշարանի մը մէջ:

Ուրքի վրայ ուտելը, սուրճի բաժակը ձեռքին վազվզելը, արագ անունդը պարտադրուած միջոցներ են, որոնք կը կիրառուին միայն ծայրայեղ պարագաներու: Իտալացիին եթէ նոյնիսկ միայն 30 վայրկեան ունի կէսօրուան ճաշին համար, ատիկա պէտք է անցընէ ընկերներուն հետ՝ սրճարանի մէջ, այլ ոչ թէ արագ որեւէ բան ուտէ հեռատեսիլին առջեւ կամ հեռաձայնով ու այլ բանով զբաղած պահուն:

Իտալացիի համար լաւագոյն կերակուրը այն է, որ աճած է այնտեղ, ուր տուեալ պահուն ինք կը գտնուի, պատրաստուած է տեղուոյն վրայ, ու նոյն պահուն ալ կերուած է: Անոր համար կերակուրը հաճոյք է, գոր պէտք է կիսել ոեւէ մէկուն հետ, քանի որ տպաւորութիւններով փոխանակուելը աննդային ծէսի անքակտելի մասն է. անիկա կերակուրը աւելի համեղ կը դարձնէ:

Շփումը հասարակական կեանքի շարժիչն է, զրոյցը՝ արուեստ: Դուք կրնա՞ք ազատօրէն շփուիլ քիչ ծանօթ մարդու հետ, ան ալ՝ ոչ թէ դասական՝ եղանակ-բնութիւն թեմայով, այլ այնպէս, որ հետաքրքրական ըլլայ: Իտալացիի հետ կրնաս խօսիլ ամէն ինչի մասին, եւ կապ չունի՝ ան ճաշարանի հասարակ աշխատող է, լողափին սքանտիւնաւեան քայլքով զբաղող ոեւէ մէկը, սրճարանի մէջ նստած պարոն, թէ՛ ոսկերչական գործարան ունեցող մէկը:

Թեմաները ամենատարբեր կրնան ըլլալ՝ սկսած միրգերու տեսակներէն ու բերքատուութենէն ու տարբեր շրջաններու գինիները համեմատելէն՝ մինչեւ Կեսարի ու Քլէոփաթրայի փոխարաբերու-

թիւններն ու հոռոմէական ճարտարապետութիւնը:

Այդպիսի խօսակցութիւնները մտորելու նիւթ կու տան, կը հարստացնեն նոր գիտելիքներով, կը պարզեն նոր ծանօթութիւններ ու կ'ընդլայնեն գիտակցութեան սահմանները: Այդ զրոյցները ուժ չեն խլեր, այլ, ընդհակառակը, կը լեցնեն:

Կեանքը վազք է: Անիկա պարզապէս կեանք է: Այստեղ եւ հիմա: Կանգ ա՛ռ: Շունչ քաշէ: Ետ նայիր: Նկատէ, որ շուրջդ կեանք կայ: Յատկապէս գուարճալի է ամերիկացիներուն հետեւիլը, որոնք անընդհատ կը վազեն՝ չես գիտեր թէ ուր:

Իտալացիները կ'ապրին այն զգացողութեամբ, որ ամէն ինչ պիտի հասցնեն: Եւ ատիկա շատ կը նուազեցնէ ճնշուածութեան մակարդակը: Դուն յանկարծ կը դադարիս շտապելէ ու կը սկսիս հասցնել անգամ այն պարագային, երբ շարունակ կ'ուշանաս:

Պարզապէս կեդրոնացումը կը տեղափոխուի այլ բանի վրայ: Քեզի ժամանակ տուր ամէն ինչի համար, ինչով ալ որ զբաղած ըլլաս. ժամանակ՝ ուտելու, երկար ճանապարհ երթալու, զբօսնելու, ընկերովդ հետ անշտապ շփուելու համար, եւ պիտի գարմանաս, թէ որքան շուտ այդ ծախսերը իրենց պիտի արդարացնեն:

Դանդաղիլը դէպի կեանքի լաւագոյն որակ ու աւելի արագ առաջընթաց արձանագրելու ճանապարհն է կեանքի շատ ոլորտներու մէջ:

Կեանքի որակը թիւ մէկ առաջնայնութիւնն է: Ոչ մէկ գիշում: Տարակերպութիւն (paradox). կեանքը որակեալ դարձնելու համար բոլորովին ալ պէտք է աւելի շատ դրամ ունենայ: Ընդհակառակը, աւելի բարձր եկամտներու ետեւէն վազելով՝ յաւակնութիւններուդ յագուրդ տալով՝ դուն կը սկսիս կորսնցնել կեանքիդ որակը: Անգամ եթէ ամէն ինչի հասած ես ու ամէն ինչ կառուցած ես, կարգավիճակը կայուն պահելու համար դուն աւելի շատ ուժ կը վատնես:

Կեանքի դրուածքը Իտալիոյ մէջ այնպէս է, որ տեղ կը ձգէ հաճոյքներու եւ կեանքը որակեալ ապրելու համար: Անոնց կեանքը այնպէս դասաւորուած է, որ բոլոր այն մանրուքները, որոնք կը կազմեն որակեալ կեանքի հիմքը, արդէն իսկ ներառուած են անոր մէջ: Կայ ժամանակ առաւօտեան սուրճի ու թերթերու համար, ժամանակ՝ ցերեկը ընտանիքի հետ ըլլալու, փոքրիկը դպրոցէն առնե-

ՏՂԱՄԱՐԴՈՒ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ ԶԻՄՆԱԿԱՆ ԵՐԷՔ ԲԱՐԴՈՅԹՆԵՐԸ

Տղամարդու կեանքին Մէջ Հիմնական Երեք Բարդոյթները

1) Դրամի պակաս: Դժբախտաբար, այսօր տղամարդոց կայացած ըլլալուն մասին կը դատեն դրամի առկայութեամբ: Այսինքն, թանկարժէք ինքնաշարժ կամ քանի մը վարկային քարտ ու անշարժ գույք ունենալու հնարաւորութեամբ: Սակայն տղամարդոցմէ քիչերն են, որ իրենց հարց կու տան՝ իսկ կեանքի մէջ ի՞նչ կարեւոր բանի վրայ պիտի ծախսեն դրամը երբ ունենամ: Այդ հարցիին պատասխանը այնքան ալ դիւրին չէ, իսկ երկար մտածելու պարագային՝ կրնայ ցնցող ըլլալ: Երբեմն տղամարդը կը մոռնայ, որ զինք շրջապատող մարդիկ կը սիրեն զինք ո՛չ միայն դրամի համար: Անոնք կը գնահատեն անոր բարութիւնը, հոգատարութիւնը, կատակասիրութիւնը, իւրապատկութիւնը, այն ամէնը՝ ինչով ան կրնայ հարուստ ըլլալ: Տղամարդը պէտք է յստակ գիտնայ իր առաւելութիւնները ու այն, թէ ինչի համար կը սիրեն զինք: Այդ պարագային ան բարդոյթներով չի տառապիր այդ պահուն գումար չունենալուն համար:

2) Կնոջ կրունկի տակ յայտնուելու հաւանականութիւնը:

Կինը, որ բնածին ուժեղ յայտնատեսութիւն (intuition) ունի, իրօք

կրնայ օգնել խորհուրդով, լսել, յուշել ու աջակցիլ: Բայց »տղամարդը չի լար«, »տղամարդը պէտք է արտայայտէ իր զգացումները« ու ասոր նման միւս կարծրատիպերը անհնար կը դարձնեն շփումն ու աջակցութիւնը: Խելացի տղամարդը պէտք է գտնէ միջոցը՝ գիտնալու կնոջ խորհուրդը, իսկ յիմարը՝ կը տառապի կնոջ կրունկին տակ յայտնուելու վախէն: Այդ վախէն ազատուելու լաւագոյն միջոցը հասարակական կարծիքը անտեսելն է: Տղամարդը պէտք է պարզապէս ընտրութիւն ընէ ու հասկնայ՝ ինքն իր կեանքով կ'ապրի, թէ՛ հասարակութեան:

3) Թերագնահատուած ըլլալը: Այս բարդոյթին հիմքը դարձեալ տհասութիւնն ու մանկամտութիւնն է: Այս բարդոյթը շատ տարածուած է, քանի որ տղամարդիկ ժառանգական մակարդակի վրայ սովոր չեն ենթարկուելու ղեկավարին:

Եթէ տղամարդը կը թերագնահատեն աշխատավայրին մէջ, ամենադիւրին լուծումն է փոխել աշխատանքն ու ղեկավարը: Բայց տղամարդը աշխատանք փոխելու մտադրութիւն չ'ունենար՝ համարելով ինքզինք չճանչցուած հանճար ու խրոնէ-պանքներու ճահիճին մէջ:

ՄԱՐԶԱԿԱՆ

Մարադոնա. «Եթե Հաւաքականը Շարունակի Այսպէս, Ապա Սամպաուլին Զի Կարողանայ Վերադառնալ Արժենքին»

Լեգենդար արժենքինացի ֆուտպոլիստ Դիեգո Մարադոնան քննադատել է Արժենթինայի գլխավոր մարզիչ Խորխե Սամպաուլին աշխարհի առաջնութեան խմբային փուլի առաջին տուրի խաղում իսլանդիայի հաւաքականի հետ ոչ ոքի խաղալու համար:



«Եթե հաւաքականը շարունակի այսպէս, ապա Սամպաուլին չի կարողանալ վերադառնալ Արժենթինա: Թիմը պատրաստ չէր առաջին խաղին, դա իսլանդական ժողովուրդին է: Իմանալով, որ իսլանդացի ֆուտպոլիստները 190 սմ հասակ ունեն, մենք ոչ մի անգամ անկրկնայինը չխաղարկեցինք կարծ փոխանցումով:

Ես չեմ մեղադրում ֆուտպոլիստներին: Ես մեղադրում եմ մարզիչին, որը չէր պատրաստել թիմին այդ խաղին: Դուք կարող էք 25 հրաշալի ֆուտպոլիստների բերել աշխարհի առաջնութեան, բայց նրանց հետ պէտք է աշխատել: Մենք տեսանք, որ իսլանդացիներն աւելի լաւ էին պատրաստ եւ դա տխրեցնում է»,- Մարադոնայի խօսքը մէջբերում է El Comercio-ն: Յիշեցնենք, որ առաջին խաղում Արժենթինայի հաւաքականը իսլանդացիների հետ խաղաց 1:1 հաշուով: Լիոնել Մեսին չկարողացաւ արդիւնաւէտ իրացնել 11 մեթրանոցը:

Ինչու է ժող Սոուրինիոն Դեռեւս Հաւատում Գերմանիայի Հաւաքականի

Անգլիական «Մանչեսթեր Եունայթեդի» գլխավոր մարզիչ Ժոզէ Մոուրինիոն, որը ֆուտպոլի 2018թ աշխարհի առաջնութիւնում աշխատում է որպէս փորձագէտ, կարծում է, որ Գերմանիայի հաւաքականը կարող է հասնել մինչեւ կիսաեզրափակիչ փուլ՝ չնայած առաջին խաղում Մեքսիկայից կրած պարտութեանը: «Իհարկէ, մեքսիկացիներն արժանի էին յաղթանակի, իսկ գերմանացիները՝ պարտութեան: «Ացտեկները» հանդէս եկան իրենց հնարաւորութիւնների սահմաններում, ներդրեցին ուժերի 100 տոկոսը: Իսկ ահա բունդեսթիմը շատ դանդաղ էր գործում, բաւական կանխատեսելի էր եւ անատամ: Կարծում եմ, Գերմանիան կարող է մտնել փլեյ-օֆֆ եւ հասնել մինչեւ կիսաեզրափակիչ փուլ, քանի որ նրա յաջող մրցակիցներն այնքան էլ վտանգաւոր չեն (Շուեդիա, Հարաւային Կորեա)», - ասել է փորձառու մասնագէտը:



Նա նաեւ մեկնաբանել է Պրագի լիա... Շուեյցարիա հանդիպումը, որն աւարտուել է ոչ-ոքի՝ 1:1:

«Բոլորը հաւատում էին աշխարհի հնգակի ախոյեանների յաղթանակին, սակայն դա շատ բարդ խնդիր էր: Առաջին կոլից յետոյ թոււմ էր, որ պրագիլացիները կը զարգացնեն յաջողութիւնը, սակայն նրանք կոպիտ սխալ թոյլ տուցին պաշտպանութիւնում եւ պատժուեցին դրա համար: «Ալեքսանդր» պաշտպաններն անհատապէս չէին հսկում շուեյցարացի յարձակողներին, շատ պասիւ էին գործում, ինչի արդիւնքում էլ մրցակցին յաջողեց կոլ խփել եւ անակնկալ գրանցել», - ասել է փորթուքալացի մասնագէտը:

Դէ Խեան Նոր Պայմանագիր Կը Կնքի Մանչեսթեր Եունայթեդի Հետ

Անգլիական «Մանչեսթեր Եունայթեդի» դարպասապահ Դաւիդ Դէ Խեան մօտ է ակումբի հետ նոր պայմանագիր կնքելուն,- հաղորդում է The Independent-ը: Բանակցութիւններն այն փուլում են, որ կողմերը չեն կասկածում՝ առաջիկայում կը կնքի 5 տարուայ համաձայնագիր: Դէ Խեան «Մանչեսթեր Եունայթեդում» է հանդէս գալիս 2011 թուականից: Նրա գործող պայմանագիրն աւարտուում է 2019 թուականին:

«Բեշիկթաշը» Հետ Է Կանչել Արաս Օզբիլիսին

Հայաստանի ազգային հաւաքականի կիսապաշտպան Արաս Օզբիլիսը վերադարձել է «Բեշիկթաշ»: Յիշեցնենք, որ մեր ֆուտպոլիստը վարձավճարով հանդէս էր գալիս Մոլդովայի բազմակի ախոյեան Տրիասպոլի «Շերիֆում»:



Վերջինս կազմում Օզբիլիսը մասնակցել էր 4 պաշտօնական հանդիպման: Ըստ «Շերիֆի» պաշտօնական կայքի Օզբիլիսը «Բեշիկթաշ» է վերադարձել թուրքական ակումբի պահանջով: Յիշեցնենք Օզբիլիսա 2018 թուականի ձմեռան էր համալրել «Շերիֆի» շարքերը:

Հռիփսիմէ Խուրշուդեանի Որակագրկումը Երկարաձգուել Է Մինչեւ 2020 Թուականը

Հայաստանի ծանրամարտի կանանց հաւաքականի նախկին անդամ Հռիփսիմէ Խուրշուդեանի որակագրկումը երկարաձգուել է մինչեւ 2020 թուականը: «Արմենպրես»-ի հաղորդմամբ, այս մասին յայտնել է Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Փաշիկ Ալաւերդեանը: «Հռիփսիմէ Խուրշուդեանի մասին դժուար է խօսել: Միջազգային ֆեդերացիան ապացուցում է, որ երկու անգամ «բռնուել է»: Բայց այստեղ հարցն այն է, որ եղել են մարզիչներ, ովքեր նոյն պայմաններում որակագրկուել են 2 տարով, իսկ Խուրշուդեանը որակագրկուել մինչեւ 2020 թուականն է: Մայիսին պէտք է աւարտուել նրա որակագրկման ժամկէտը, բայց միջազգային ֆեդերացիան չեղեալ համարեց եւ երկարաձգեց մինչեւ 2020 թուականը», - շեշտել է նա:



Խուրշուդեանը Եւրոպայի առաջնութեան կրկնակի ախոյեան է: Ներկայանում էր 75 կգ քաշային կարգում:

Ըմբշամարտ. 1 Ոսկէ Եւ 2 Պրոնգէ Մետալ Հունգարիայից

Հունգարիայի Դիոն քաղաքում աւարտուել է ազատ ոճի ըմբշամարտի դպրոցականների Եւրոպայի առաջնութիւնը: Հայաստանը ներկայացնող ազատ ոճի ըմբիշները 3 մետալ են նուաճել: 48 կգ քաշային կարգում Եւրոպայի ախոյեան է հռչակուել Մուշեղ Մկրտչեանը: Նա եզրափակչում 4:1 հաշուով առաւելութեան է հասել թուրք Մետին Կարաբեյլիի նկատմամբ: Պրոնգէ մետալներ են նուաճել 44 կգ քաշային Վարդան Ամիրխանեանը եւ 62 կգ քաշային Դաւիթ Մարգարեանը: Նրանք յաղթել են համապատասխանաբար Ատրպէյճանի եւ Իսրայէլի ներկայացուցիչներին:

ՀՖՖ-ն Կասեցրել Է «Շիրակ»-ի Անդամութիւնը

Յունիսի 16-ին կայացել է Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիայի Գործկոմի հերթական նիստը:

Ինչպէս տեղեկացնում է ՀՖՖ պաշտօնական կայքը, Գործադիր Կոմիտէն քննարկել է ՀՖՖ անդամ ակումբների՝ «Միկա» ՖԱ ՀԿ-ի, «Ուլիս» ՖԱ ՀԿ-ի, «Արմաւիր» ՖԱ ՀԿ-ի, «Ֆուրման Աբրահամեան» ՖԱ ՀԿ-ի, «Հայ-Արի» ՖԱ ՀԿ-ի, «Էսթեղլալ-Կոտայք» ՖԱ ՀԿ-ի եւ «Զուարթնոց ՀԱՌԻ ՖԱ» ՀԿ-ի ՀՖՖ անդամութիւնը դադարեցնելու հարցը:



Կոմիտեի անդամները միաժամանակ քննարկել են «Շիրակ» ՖԱ-ի կողմից ՀՖՖի, ՖԻՖԱի եւ ՈւԵՖԱի կանոնադրութիւնների եւ կանոնակարգերի բազմակի եւ կոպիտ խախտումների հարցը, մասնաւորապէս՝ պայմանաւորուած խաղի կազմակերպման մէջ ներգրաւուածութիւնը, արբիտրաժային վէճը ընդհանուր իրաւասութեան դատարանների միջոցով լուծելու փորձը: Գործկոմը միաձայն որոշեց կասեցնել «Շիրակ» ՖԱ-ի ՀՖՖ-ի անդամութիւնը եւ հարցը ընդգրկել ֆեդերացիայի առաջիկայ հերթական ժողովի օրակարգում:

Սփայթ Սկրտչեանը Մարզուում Է NBA-ը Ներկայացնող «Դենվեր Նագեթս»-ի Կազմում

Հայաստանի բասկետբոլի հաւաքականի անդամ Անդրէ Սփայթ Սկրտչեանը կարող է համալրել NBA-ի «Դենվեր Նագեթս» թիմի կազմը:

Սկրտչեանը արդէն մարզում է անցկացրել թիմի հետ: «Դենվեր Նագեթս»-ն Քոլորադոյի համալսարանի մարզիկներից մի քանիսին հնարաւորութիւն է տուել մարզուելու թիմի հետ: Նրանց շարքում է եղել նաեւ Անդրէ Սփայթ Սկրտչեանը:



Սկրտչեանը հրաւիրել է Հայաստանի հաւաքական:

ՅԻՒՄԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՏԱՐԵԿԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ



2018 թվականի Մայիսի 25-28-ը տեղի ունեցավ թեմի երիտասարդաց 54-րդ տարեկան մարզախաղերը: Սա երիտասարդական չորս գլխավոր ձեռնարկներից մեկն է, որ տեղի է ունենում ամեն տարի Արեւմտեան թեմիս երիտասարդաց կեդրոնական վարչութեան նախաձեռնութեամբ: Տարբեր ծխական համայնքներից երիտասարդները թիմեր են կազմում եւ մրցում մի քանի մարզաձեւերու մէջ:

Բացման արարողութիւնը տեղի ունեցավ Արեւմտեան թեմի առաջնորդ Տէր Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի աղօթքով եւ քաջալերական խօսքով: Սրբազան հայրը շնորհակալութիւն յայտնեց երիտասարդաց կեդրոնական Յանձնախմբին՝ հովուութեամբ Տէր Աւետիս քահանայ Աբովեանի, որ ջանասիրաբար կարողանում է տարբեր ձեռնարկներով ի մի բերել

թեմի երիտասարդներին: Այս երեք օրերին երիտասարդների հետ էին Տէր Աւետիս քահանայ Աբովեանը, Տէր Եսայի քահանայ Պետրոսը, Տէր Եղիշէ քահանայ Քսածրիկեանը, Տէր Զաւէն քահանայ Մարկոսեանը, Տէր Մեսրոպ քահանայ Աշը եւ առաջնորդարանից վահէ Սարգսեանը:

Ձեռնարկը ուղեկցում էր նաեւ ազգային երգ ու պարով: Մշակութային բաժնում իրենց մասնակցութիւնը բերեցի Սակրամենտոյի, Օքլանդի, Ֆրեզնոյի, Սան Ֆրանսիսքոյի ծուխերի ներկայացուցիչները, Հոմենթմենի Սասուն մասնաճիւղի սկաուտները, Ֆրեզնոյի Հայ Պարային Ակադեմիան, ինչպէս նաեւ առանձին անհատներ Առաքել Իսայեանը, Անդրիու Յակոբեանը եւ այլք:

Ձեռնարկը աւարտուեց մրցանակաբաշխութիւններով եւ ամփոփիչ պարահանդէսով:

ԻՆՉ ԱՐԺԷ ՍՈՐԿԻԼ ԻՏԱԼԱՅԻՆԵՐԷՆ

Շարունակուած էջ 17-էն

լու կամ քիչ մը ննջելու, ընկերներու հետ հանդիպելու եւ նախընթրիքի շուրջ որեւէ բան ուտելու եւ շատ այլ բաներու համար:

Պէտք է ապրիլ աշխատելու համար, այլ պէտք է աշխատիլ ապրիլ հասցնելու եւ լաւ ապրիլ հասցնելու համար: Ներողամիտ ու խնայող ըլլալ դուն քեզի հանդէպ: Իսկ ինչու ոչ-ը՝ իբրեւ կենսափոխափայլութիւն: Իտալիան հարուստ է գայթակղութիւններով: Համեղ սուրճ ու խմորեղէն՝ ամէն անկիւնի վրայ, գերազանց գինիներ, համեղ պաղպաղակ, զանազան տեսակի խանութներ, ուր առանց գնումներու հնարաւոր է հեռանալ: Եւ ուրեմն, իսկ ինչո՞ւ ոչ:

Գաղափարը այն է, որ քեզ չզրկես փոքրիկ ուրախութիւններէ, եւ այդպէս ամէն օր, քանի որ այդպէս դուն ո՛չ թէ կը խեղդես խնդիրներդ, չես մտածեր անոնց մասին, այլ կը շարունակես զգալ, որ ամէն պարագայի կեանքը հիասքանչ է:

Ընտանիքի հետ ժամանակ անցընելը: Ընտանիքը ամբողջ է: Երբ դրամդ կը վերջանայ, կը մոռցուին նուաճումներդ, աշխատող մէկ կը սփռուին ընկերներդ, այն որ քեզի կը մնայ, ընտանիքդ է:

Իտալիոյ պատմութեան ամբողջ ընթացքին՝ անոր համար բնորոշ քաղաքական ու տնտեսական շարունակական անկայունութեան պայմաններուն մէջ՝ ընտանիքը յաճախ կը մնայ միակ վայրը, ուր միշտ ուրախ են ու չեն դաւաճաներ քեզ:

Իտալական կիրակնօրեայ ընթ-

րիքները, որուն ընթացքին կը հաւաքուին բոլոր մտերիմներն ու հեռաւոր ազգականները, արդէն ասացուածքի առիթ դարձած են: Ճիշդ է, աղմուկը անտանելի է, տարատեսակ հօրաքոյր-մօրաքոյրները՝ նոյնպէս, արդէն չես կրնար նայիլ մեծ մամայի աւանդական ճաշատեսակին, կը ձանձրացնեն ֆութպոլի ու կազմուածքի մասին նոյն խօսակցութիւնները, սակայն ընտանիքը կը շարունակէ կայունութեան ու պաշտպանութեան զգացողութիւն տալ, եւ այդ պատճառով ալ կիրակնօրեայ ընթրիքները այդքան կարեւոր են:

Մենք յաճախ քանակի փոխարէն կը կեդրոնանանք որակի վրայ, իսկ իտալացիները կը հաւատան, որ որակը կու գայ քանակէն ետք, եւ կարեւոր է ո՛չ թէ այն, թէ ուր կ'երթայ ու ինչ կը սորվի փոքրիկդ, այլ այն, թէ որքան ժամանակ դուք կ'անցընէք իրարու հետ:

Ամէնուր երթալ փոքրիկներու հետ: Փոքրիկները հիասքանչ են: Իտալիոյ մէջ ամէնուր արտօնուած է փոքրիկներու հետ մտնել: Այնտեղ բոլորը ուրախ են ձեզ փոքրիկներու հետ տեսնելով: Երեխաներ կը տեսնէք թէ՛ ճաշարաններու, թէ՛ սովորական սրճարաններու եւ թէ՛ խանութներու մէջ: Այնտեղ շատ արագ փոքրիկի համար յատուկ աթոռ կը տրամադրեն, կը խաղան անոր հետ, զբաղում կը գտնեն անոր համար: Մէկ խօսքով, եթէ հետդ փոքրիկ կայ, դուն շատ հանգիստ կրնաս երթալ ուր կ'ուզես ու լաւ ժամանակ անցընել:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

ՅԱԲԱՑԱԿԱՆ

ԱՐՍԷՆ ՏԱՔԷՍԵԱՆԻ մահուան առթիւ (մահացած Պէյրուք) խումբ մը Տիւրուհի Ուսանողական Միութեան նախկին անդամներ իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն եւ Ս.Դ.Յ.Կ.Ի Տիւրուհի Ուսանողական Միութեան վարչութեան:



ԱՋՆԻ ԵՒ ԲԱՐԵՐԱՐ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԸ

Շարունակուած էջ 14-էն

ձեռամբ Երջանկայիշատակ Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Ինքն էր որ այդ բացառիկ առիթով Հայրապետական Ս. Պատարազի մատուցման մեկնաբանն ըլլալով երգապնակի վրայ աւելցուց եւ յաւերժացուց իր ձայնը եւ հեղինակաւոր մասնակցութիւնը:

Մտերմիկ առիթով մը Տէր Հայրը ծածուկ յայտնեց ինծի Մայր Աթոռին մատուցած իր նիւթական օժանդակութեան մասին հիացում պատճառելով թէ ինչ խոր համուզումով մինչ այդ կատարած էր բարձրօրէն նկատելի բարերարու-

թիւն, եւ երբ տարիներ առաջ հրաւիրուած էի Սեւանի վազգէնեան ձեմարանի տեսուչէն դասախօսելու, հոն իսկոյն ինք եւ իր ընկերներուն անունները կը փայլէին: Կասկած չկայ որ ձեմարանի շրջանաւարտներէն մին խմբական քահանայական ձեռնադրութեան առիթով կը ստանար Տէր Գառնիկ հոգեւորականի անունը:

Տէրը լուսաւորէ Գառնիկ Աւագ Քահանայ Հալլաճեանի հոգին ու իր բարի լիշատակը օրինակ հանդիսանայ մեր գալիք հոգեւորականներու ծառայութեան ճամբուն վրայ:

Յատուկ ՄԱՍԻՍ-ին

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան Եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնէ՛ք ՎԱՅԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian

1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State: ----- Zip Code: -----
Country: -----
Tel: ----- Email: -----



**ՀՆՉԱԿԵԱՆ ՔՄԱՆ
ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ 103-րդ
ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ**

«Մեր Յստակ Տեսլականը՝ Ժողովրդավարական և Անկախ ՀԱՅԱՍՏԱՆ»

Կազմակերպւթեամբ՝
Ա.Դ.Բ.Կ. Փարանազ Մասնաճիւղի

Հովանաւորութեամբ՝
Ա.Դ.Բ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինի

Գլխաւոր Բանախօս՝
**Ա.Դ.Բ.Կ. Կեդրոնական Վարչութեան Անդամ Գանատայէն
ԸՆԿ. Կիրակոս Թիւթիւնճեան**

Կիրակի, Յուլիս 15, 2018
Ժամը 5:00-ին

Փասատինայի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Կիրակոս Սրահ
2215 E. COLORADO BLVD. PASADENA CA. 91107

Գեղարուեստական ճոխ Յայտագիր
Մուտքը Ազատ

